

Ա. Խ. Հ. Մ.

Հ. Ս. Խ. Հ.

Գրութեաներ բայու յեկեների, միացե՛ք.

355.42  
4-63

Լ. Ա. ԿՈԶԼՈՎՍԿԻ

# ՔՈՂԱՐԿՈՒՄ

II և III ՄԱՍ

Ա. Բ. Գ. Ե. Ս. Տ. Կ. Ա. Մ. Տ. Ե. Խ. Ն. Բ. Ա. Կ. Ա. Ն.  
Ք. Թ. Պ. Ո. Բ. Կ. Ո. Խ. Մ.

(Հրամկագմի յել բողարկացին խմբերի համար պար-  
տադիլ տեղեկություններ)

Հայ-ռուս բառացուցակով

Թարգմ. Հ. Ա. Ե. Բ. Ա. Ն.

300  
1410-40

№ 5

Ա. Ա. Բ. Ռ. Շ. Խ. - ի 6 Կ. Յ.  
լական Խմբագր. - Համարակչական Կոլեգիա

ՅԵՐԵՎԱՆ - 1924

5. Ա. Խ. 5. Ենթակա բարեկամություն 5 դրամ քառա  
Սահման 12/12  
Ա. Խ. Հ. Ա. 280.2-12  
№ 5 Պատեսարենք բալոր լեւեների, միացե՛ք. № 5 Ճա

J. L. Z. U. \_\_\_\_\_

№ 5 Պրոլետարիներ բայց լեռների, միացե՛ք. № 5 չ

200

1410-40

355.1.2

1-63

Լ. Ա. ԿՈԶԼՈՎՍԿԻ

# ՔՈՂԱՐԿՈՒՄ

II & III ԱՅՍ

1988  
1003

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԿՈՄ Ո.ՊՎԵՍՏԱԿԱՆ  
ՔՐԴԱԿԱԿՈՒՄ

(Հրամկագմի համար պարտադիր տեղեկություններ)



Հայկական Խմբագր. - Հատարակչական Կոլեգիա  
ՅԵՐԵՎԱՆ, 1924 թ.

22 MAY 2013

41.775

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախքան տեխնիքական քողարկումին անցնելը, ցույց տանք ամբողջական գորամասերի համար հարկավոր բնական յել ռազմավարական քողարկումի ձեվերը, փորոնց մասին խոսք չի յեղել առաջին մասի մեջ՝ «Տեղեկություններ, փորոնք անհրաժեշտ են ամեն մի հետեւակի, հեծելակի և հրետավորի համար»:

Այս ձեվերը կազմում են հետեյալ գործոցությունների առանձնահատկությունները:

## ԶՈՐՔԻ ԹԱԳՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Զորքի գաղանի տեղափոխությունը կարելի յե կատարել.

1. Ընդունված փորոշումը գաղանի պահելով. այդ պատճառով փորոշումը պետք է հայտնել միայն նրանց, ում վոր անհրաժեշտ ե այդ իմա-

նաև՝ Այս վերաբերում և և գաղտնի զրադրությունը պահելուն, ծածկադրերի պահպանումին, նրանց փոխելուն, պայմանական նշաններով հարաբերությանը և այլն:

2. Ընդունված վորոշումը գաղտնի կատարելով.

ա) Գիշերը պետք է դուրս գալ. (զորքերին չպետք է հայանել գործողության նպատակը);

բ) Դուրս գալ գյուղից ավելի լավ և վասնեղանակին կամ մտախուղին.

գ) Շարժումը սկսել վոչ այն ճանապարհով և վոչ այն ուղղությամբ, ուր իսկապես պետք է գնալ. գիշերը և մառախուղին հաջորդաբար ուղղությունը փոխել, ձորակներով, տեղանքի ծալքերով, անտառներով և այն գնալիս:

### ՅԵՐԹԱՇԱՐԺ

Յերթի ժամանակ ավելի լավ և փոքրիկ սյուներ կազմել. փոփոխել միջանցը և շարքը. մեծ սյուները վերածել առանձին - առանձին խնդուրույն շարժում կատարող մասերի. Պետք է կրանքները (պարկերը), զումակները, հրետանին և խոհանոցները հետեւակից բաժանել:

Յեթի այդ կապված և գժվարությունների հետ, այն ժամանակ պետք է բոլոր հեռակայությունները կամ յերկարացնել կամ կարճացնել. ոգտագործել բոլոր զուղընթաց ճանապարհները, ընարելով այն ուղիներն ու կածանները, վորոնք անցնում են անտառի, թփերի կամ յերկու կողմը տնկած ծառների միջև:

Ավելի գարեւոր աեղափոխություններ կատարելու համար հարկավոր և ոգտվել գիշեր ժամանակից և վասնեղանակից:

Յերբ սակառնակ հայանվի, ամբողջ սյունը պետք է կանդ առնի. յեթե ժամանակ լինի, պետք է պառկել և խմբեր կազմել. պառկելով թփերէ մեջ, շվաքներում և խրամների մեջ. կարելի յե և շարժվելով ուղղությունը փոխել, ոգային հետախուղությանը շփոթության մեջ ձգելու նպատակով:

### ԱՆՇԱՐԺ ՊԱՀԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ոժանդակը յեվ առաջակալները պետք եռեղափորել անտառի, թփերի, շինությունների մեջ. խարույկ չվառել, շրջակայթում աննպատակ չթափառել, մանավանդ ձմեռ ժամանակ:

Դաւային պահակները պետք եւ հարժար-  
ուցնել աեղանքին. շինելի խրամատները քո-  
ղարկել:

Ժամապահն ու իր ոգիականը պետք եւ  
հարժարվեն, աեղանքին, խալաթներ, կորդակ-  
իսողարկներ, հագուստ-քողարկներ հագնեն, զա-  
նազար դիրքեր ընդունեն:

Գետերը պիտի հարժարվեն աեղանքին,  
ինչպես շարժական պահապանության ժամանակ,  
Գաղոթի չպետք եւ ծխի և չխռոխ:

### ՅԵՒԿԱԹՈՒՂՈՎ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Տեղափոխելի գորամասերի, նրանց համար-  
ների, թվի և զերի մասին պետք եւ հայտնել  
միայն նրանց, ուժ այդ անհրաժեշտ եւ իմանալ.  
Պորբի տեղափոխության բոլոր գրքերն ու տե-  
ղեկազրերը պետք եւ զաղտնի պահել. վաղոն  
նստեցնելու ժամանակ կայարանի շրջանում  
կողմանակի մարդկանց ներկայությունը թույլ չը-  
տալ. կայարանների պարետները տեղեկանք պի-  
տի տան միայն նրանց, ովքեր կներկայացնեն  
անձնական վկայական, Յերկաթուղու ծառայող-  
ներից վոչ մեկը չպետք եւ տարածի, թէ քանի

շարաններ (եշելոն) եւ ուղարկած, քանիսն եւ  
յեկել և անցել, ինչ կազմով, քանի վագոն,  
տամալ (պլատֆորմ), ինչ բեռով, ինչ զորամա-  
սեր են տեղափոխվել, և ինչ ուղղությամբ են  
գնացել: Վագոնների վրա չպետք եւ զրել զորա-  
մասերի համարները և գնալու տեղի անունը.  
տամալով (պլատֆորմով) տեղափոխելի իրերը  
պետք եւ ծածկել:

### ՎԱԳՈՆՆԵՐԻ ԲԵՌՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԲԵՌՆԱԹԱ- ՓՈՒՄԸ

Վագոնների բեռնավորումն ու բեռնաթա-  
փումը, վորքան հնարավոր եւ, արագ պետք եւ  
կատարել յեթե կարելի յե գիշերը և առանց  
աղմուկի. պետք եւ փոքր խմբերով կատարել:

Վագոնները նստեցնելու ժամանակ և իջեց-  
նելուց հետո պետք եւ զորքերը և գումակ-  
ները տեղափորել թաքուն տեղ:

Զիերը, թնդանոթները և այլն վագոն  
մտցնելու համար կամըջակները պետք եւ զնել  
հենց այն բռակելին, յերբ սկսում են մտցնել, և  
վերցնել վերջացնելուց անմիջապես հետո:

Սյուների շարժումը գեղի կայարանները  
տանող ճանապարհներով, վորքան հնարավոր ե,  
պետք և կատարել զիշերը, պահպանելով յեր-  
թաշարժերի համար հարկավոր քողարկման մի-  
ջոցները, Գիշերները կայարաններում հնարավոր  
չափող լույս քիչ թողնել:

### ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՆԳԻՍ

Բնակարաններում հանգիստ տոնելու ժա-  
մանակ չպետք է տարածել լեկող զորացմասերի  
համարներն ու թիվը, պետերի ազգանունները,  
գնալու վերջին կայարանը և այլն. չպետք է  
գրել զորացմասերի համարները, կազմի մասին,  
և կամ գրել պայմանական ձևով. Ծդային հե-  
տախուզությունից թարնված մնալու համար  
չպետք է խոնվել հրապարակներում, ջրհորների  
մոտ, գյուղից դուրս տանող ճանապարհների  
ծայրին և շենքերի մոտ:

Տներում վառարաններ քիչ վառել գիշերը  
ամենեին չվառել, կը ակները հանգցնել, վա-  
ռած լսալտերներով ավտոմոբիլների շարժումը  
սահմանափակել:

Շտարները տեղափորել բնակիչներից և մեծ

ճանապարհներից հեռու քիչ նկատելի շենքերում,  
ցուցանակներ չկախել:

Յեկող ձիավորները, ավտոմոբիլները, մո-  
տոցիկլետները պիտի կանգ առնեն մինչև շտա-  
րին հասնելը և խկույն ձիերն ու սայլերը քա-  
շեն բակերը ծածկերի տակ:

Շտարի մուտքի մոտ չպետք է կանգնել և  
խոնվել. Ժամապահներին պետք է տեղափորել  
ծածկել տեղ. զիշերը լուսամուտները ծածկել  
վարագույրով:

Կապի զիծը անպայման անցկացնել թա-  
քուն տեղերով ոգտվելով ցանկապատներից,  
թիշերից, ծառերից և այլն:

## ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԿԱՄ ԱՐՎ ԵՍՏԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ

(Համապատասխան համար պարբռագիր տեղեկություններ)

Քողարկումի ներկա դասընթացը, ինչպես վոր առաջին մասում ել նկատել ենք, քողարկումի զիտելիքները չոկ-չոկ խմբավորելու նպատակով յերեք մասի յե բաժանվում.

1. Տեղեկություններ, վորոնք անհրաժեշտ են ամեն մի կարմիր բանակայինի համար.

2. Տեղեկություններ, վորոնք պարտապիլր են զորքի մերձավոր զեկավարների, այսինքն հրամկագմի համար, մարտի ժամանակ ամենահասարակ տեսակի քողարկումները կիրառելու համար.

3. Տեղեկություններ, վորոնք մարտի ժամանակ պահանջում են քողարկումի համար ավելի լայն, մասնագիտական զիտելիքներ, մասնագետ հրահանգիչներ և նյութեր:

Այսպիսով, քողարկումի դասընթացի առաջին մասը իր մեջ պարունակում է.

Ա. ԲՆԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ (զորաշարժ, զորական միմիկրիա, տեղանքին հարմարվելը, բնական պայմանների ոգտագործում և ուղղմական գաղտնիքը պահպանելու միջոցները):

Իսկ քողարկումի II և III մասերը պարունակում են իրենց մեջ:

Բ. ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԿԱՄ ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄՆԵՐԻ, վորոնք բաժանվում են.

1) Պատկերագոր կառուցական.

ա) Ներկային քողարկում, բ) կամուֆլաժ, գ) գաշտային զեկորացիա և դ) սկուլպտական քողարկում.

2) Ռուսական բողարկում.

3) Հռա-թիմիական բողարկում.

4) Շագմական գրիմ:

Այս արիթեստական քողարկումի մեջբերված որինակներից ավելի հասարակները, վորոնք այդ գործի համար առանձին մասնագետներ չեն պահանջում, կազմում են ներկա դասընթացի II մասի առարկան:

Հետախուզգների լեզ դիտողների բողակումը.

Բացի ներկա կուրսի և մասում ցույց տված քնական քողարկումը կիրառելուց, ամեն մի հետախույզ կամ դիտող, կարող է հայթայինված լինել քողարկումի հետեւյալ միջացներով, վորոնք պատրաստվում են իր գորածասում:


1. ԽՍԼԱԹ-ՔՈՂՈՐԿԻ. պետք է պատրաստել առալրակի կամ ուրիշ աժան կտորից և նույնիսկ կտրելի յե խոփրից կարել:

Խալաթը պիտի լայն լինի, կնդուզով և լայն թեփերով: Խալաթի գունավորումը մանրամասն ցույց է տրված - հետախույզների քողարկային խալաթները կամուֆլաժի յեզանակով ներկելու հատուկ հրահանգի մեջ: (Սքեմա նկար 1):


Հիշյալ գունավորման նպատակը առարկայի անտեսանելի դարձնելն է, վոր կատարվում է նրա ուրվանկարը փայլուն և մութ բծերի բաժանելով:

Ամարային գունավորման ժամանակ խալաթի ամբողջ ֆոնը պիտի լինի կանաչ, կամ առնասարակ այն տեղանքի գույնին համեմատ, ուր պետք է կատարվի հետախու-

ԽՍԼԱԹԻ ՆԵՐԿԵԼՈՒ ՄՔԵՄԱՆ



ԽՏԾԱՄ ԴԵՎՈՒՅԻ ԱՅ ՄՔԵ



Նկար 1

Պությունը: Ինչպես հիշված է, այդ փոնի վրա պետք է գծել անկանոն ձեխ բծեր մարդու գըլ-խի չափից վոչ պակաս (մրով կամ ումբրայով):


Չմեռը գունավորելիս խալաթի փոնը մնում է սպիտակ, իսկ բծերը պիտի ներկել մութ-մոխրագույն:

Խալաթը ներկելու ժամանակ կպցնելու ամենալավ միջոցը կարող է լինել շվեդական ըրեզը, վոր կատարելագործել և Ն. Վ. Վարսնկովը: Շվեդական շրեշից ոգավելիս կարելի յե խալաթը թողնել առանց գունավորման: Դրա համար հարկավոր է վերցնել ուղղակի հողը, քիչ մաղել խառնել շրեշի հետ և ներկել:

2. ԿՈՐԴԱԿ-ՔՈՂԱՐԿԸ, վոր հագնում են գլխին, հողի վրա պառկած դիտողին ծածկում և մինչեւ դոսին:

Կորդակը պատրաստվում է հետեւալ ձեռվ. գետնի կամ հատակի վրա 16 հատ ձողիկներ կամ մեխեր պետք է խփել կիսաշրջանի

ձեռվ այնպես, ինչպես ցույց և տրված 2-րդ նկարում:



Նկար 2


Նկար 3

Այդ հենքի վրա 2-3 միլլ. տրամագծով բարակ լարանից հյուսել ցանց՝ 3, 4, 5-րդ նկար-ներում ցույց տված կարգով. սկսել 4 վերշոկ կողմ ունեցող քառակուսիներով և վերջացնել մի վերշոկանոցներով:

Առաջ ձողերի դրսի կողմից պինդ պիտի քաշել և կապել լարանն այնպես, վոր կապելուց հետո մնացած ծայրերը լինեն վոչ պակաս քան 2 վերշոկ յերկարությամբ: (Նկար 3):


Հետո լարանի կտորները կապել վոչ այնքան պինդ և վոչ ել թույլ դրսեի փաթաթածին, 4 վերշոկ մեջ տալով, հորիզոնական և ուղղահայաց ուղղությամբ: Այդ կտորները պետք

և կապ գցել կամ վոլորել իրար հետ խաչկապերի վրա. իսկ ծայրերը պինդ կապել դրու կողմից շրջապատող թելերին և կապից 2—3 վերշոկ յերկար թողնելով՝ կտրել. (Տես նկար 4):




Նկար 4

Այսուհետեւ հյուսելը պիտի շարունակել նույն ձևով. լարանը վանդակների միջով անցկացնելով հյուսելը մինչև վոր մի վերշոկ վանդակներով ցանց սաացվի: (Նկար 5 և 6):



Նկար 5



Նկար 6

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՐՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Հ.Ս.Խ.Հ. Պանական Գրադարան  
7/11. 1922


Ամեն մի կորզակի վեհապահ մասնակից այդպիսի յերկու կիսաշրջան համար այսուհետոց հետո քառակուսի վանդակների բոլոր խաչմերուկ կետերում կամ մեկումէջ հարկավոր և կապել լորակների (կեղաթելերի) փնջեր, 6—8 վերշ. յերկարությամբ և ամեն մի փնջի մեջ 3—5 հատ, 7-րդ նկարում ցույց տված յեղանակներից մեկով:




Նկար 7

Յերբոր ցանցերը հյուսված կլինեն լորակներով, նրանց պետք ե հանել հենքի վրայից, և այդպիսի կորդակի յերկու կիսաշրջանները լարանի մնացած ծայրերով իրար կապել

Ապոր կողմի յերկարությամբ մինչև  $\frac{2}{3}$  մասը:  
(Նկար 8):



Նկար 8.



Տ ա մ կ ը,

Կորդակը ծալած գրությամբ կարելի յերել մեջքին: (Նկար 9):

**Մանրամասն նկարագրությունը կարելի յե գտնել 1922 թ. քողարկումի հրահանգների ժողովածվի մեջ:**


3. ՀԱԳՈՒՍՏ-ՔՈՂԱՐԿԸ. \*) Այս հագուստը պիտի կարել մարդու երանի ուրվագիծն ավելի ընդհանուցնող ձևով, և այն ել առաջի կեսը պատրաստել հասարակ կատարից, իսկ հետեւ կնգուզն ու գեվերը՝ անպատճառ գորգից:

\*) Մանրամասն նկարագրությունը տես քողարկությունում կորդեր պատրաստելու և գործադրելու հրահանգների մեջ:

Տ ա մ կ ը,

Գորգը պատրաստում են կտորից, վորը ծառա  
յում ե իրեն հենք, իսկ վերեից նրան կարուղության համար ազատ և ունի թաքցնելու  
են լորակի փնջիկներ: Հետո այդ գորգը պիտի հիանալի հատկություններ. (10—15 քայլի վրա  
ներկել շրջապատի գույնով: Գորգերը, ինչպես իստերի մեջ անհնար և մարդուն գտնել). ուս-  
հետո կտեսնենք, ծառայում են քողարկում  
զանազան ձեռքի համար:

Հագուստի թեերը պիտի միանան իրան  
հետ, յուրատեսակ թեերով: (Տես նկար 10):



Նկար 10

Այս հագուստը թեթև է, հարմար, շարժու-  
ության համար ազատ և ունի թաքցնելու  
հիանալի հատկություններ. (10—15 քայլի վրա  
իստերի մեջ անհնար և մարդուն գտնել). ուս-  
ամի այդ հագուստը հետախույզի համար կարելի  
յէ հաշող կերպով կիրառել. այլի մարտական  
գործողությունների ժամանակ, յերբ մեծ զաղո-  
նիություն և պահանջվում, նույնիսկ հրացա-  
նաձիգների ջոկատներ կարող են հայնել այդ  
հագուստները:


Հակառակորդին դիտելու և իրեն նրանից  
թարցնելու համար անհատական քողարկներից  
բայն կերպով կտրելի յի գործածել ուղղահայց  
քողարկները՝ լուի - բուլարկի, ճռվաեւց - նո-  
դարկի: Ճեռվ:

ԹԲԻ.Փ.ՔՊԴԱՐԿՈՒ ոլիտի ոլատրաստել հե-  
տեւյալ ձևով: Ծերկու կամ՝ յերեք ձողիկ՝  $\frac{1}{2}$ — $\frac{1}{2}$   
վերշոկ հաստությամբ և ամեն մեկը մոտ մի  
մետր յերկարությամբ պիտի կազել իրար յեր-  
կու թոկով այսպես, վոր կարելի լինի այդ ձո-  
ղերը մեկ մեկուց վորոշ հեռավորության վրա  
կանգնեցնել: Ասեն մի ձողին ամրացնել կար-

տոնի կամ ֆաների կտոր չորս կողմից անհավասար կտրտած։ Բացի դրանից ֆաների կամ կարտոնի կտորների վրա պետք է անկանոն ձեր ծակեր անել։ Զողիկները կանգնեցնել իրարից այնպիսի հեռավորության վրա, վոր ֆաների կտորները կպչեն իրար։ Թաները կամ կարտոնը ներկել բնական թփերի գույնին ու յերանգին (տոնին) համեմատ։


Այսպիսի քողարկը պիտի ուղղահայաց կանգնեցնել և ձողիկներով ամրացնել գետնին։

Այսպիսի քողարկի յետևում թաքնված հրացանաձիգը ազատ կերպով կարող է դիտել և հրաձգություն կատարել քողարկի ծակերի միջից։




Նկար 11

Կարելի յե մի ուրիշ միջոց ել կիրառել։ Գետնի մեջ խփած յերկու ձողերի միջև քաշել յերկաթուլարի կամ թոկի ցանց և նրա վրա կտոր ամրացնել։ Կտորը պետք է ներկել թփերի գույնին համեմատ։ Իսկ հետո նրա վրա տեղադրել ծակ բաց անել անկանոն ձեռքով։ յեզրերը նույնպես կտրտել անկանոն ձեռվ։ (Նկար 11)։




Նկար 11

Քողարկ կարելի յե շինել և կտրած փոքր առանձին - առանձին թփերից: Յերկաթալարով, թոկով կամ ծառի կեղևով իրար պիտի կտրել յերկու կամ յերեք թուփի, յերկու խոտորնակ փայտերի հետ, և այսպիսի թուփը, ճյուղերի առը ծայրերով ամրացնել դետնին: (Նկար 12):



Նկար 12

5. ՀՈՎՀԱՐ-ՔՈՂԱՐԿԸ համարյա նույն ձևով ե շինվում ինչ վոր թուփ-քողարկը: Փոքր և սրած ձողի վրա պետք ե յերեք կամ չորս փայտյա բարակ ու նեղ տախտակներ ամրացնել մեխերով, յերկաթալարով կոմ թոկով: (Նկար 13):



Նկար 13

Տախտակների վրա պիտի ամրացնել յեզրերը անհավասար ձևով կտրտած փաների, կարտանի կամ տոպլրակի կտոր և ներկել տվյալ տեղանքի թփերի գույնին: Այսպիսի հովհարը, յերե կտոր և քաշած, կարելի յե ծալվող անել: Այս

քողարկները հարմար են հետը ման տալու համար, աբագ և հեշտ են շինվում և մարտիկների համար հարմար ե տեղափոխել, մանավանդ ծալվողները:




Նկար 13

6. ՀԱՎԱՆՈՑ-ՔԱՂԱՐԿԻ կաղմած և փայտյա բնից, վորի ծայրին յերկաթալարով կամ վորեե կալուզ կապով պիտի ամրացնել մի քանի հատ բարակ փայտյա կամ ավելի լավ և մետաղյա (պողպատյա) մլեր: Մլերը ծառայում են իբրև հենք կտորի համար և կտրող են այնպիսի դրություն ընդունել, ինչպիսին ցույց ե արված նկարում: (Տես նկար 14):

Մլերին կտոր (քաթան, կտավ) պետք է ամրացնել թելերով կամ սոսնձով: Կտորի յեղքերը կտրտել անհավասար ձեռվ, և ներսում ծակեր անել ինչպես նախորդ նկարում: Կտորը դրսի կողմից ներկել թփերի բնական դույնին:

Յեթե գործածելու կարիք չկա քողարկը կարելի յե ծալել հովանոցի նման, վորի շնորհիվ և հարմար ե տեղափոխության համար:

Յես առաջարկում եմ, և 21-րդ դպրոցում փորձ ե արված, հովանոցի մի նմուշ, վոր ամբացրած և լինում հրացանի սվինին: Այս հովանոցը ծալվում ե և պետք չեղած դեղքում սվինի մոտ պտույտ տալով կարելի յե կըել հրացանի վրա ծալած զրությամբ, թացի զրանից հովանոցի ողի վրա, վորի միջով նշան են բռնում, կա տիե-նաչափ - ցանց», վորը վորոշում ե հակառակորդի հեռավորությունը: (Տես նկար 14)



Նկար 14

Այս հովանոցը յես անվանել եմ Լ. Ա. Կողբով-  
ըսկու «ավին-քողարկ-հովանոց» - նեռ աչափա:

Մինհատ դիտողին քողարկելու համար նույն-  
պես կարելի յե քողարկումի պատկերավոր - կա-  
ռաւցական բաժնի համաձայն պատրաստել  
սկզբանական - քողարկումի ավելի հասարակ  
և վոչ բարդ առարկաներ:




Նկար 14

Սկզբանական - քողարկումը զբաղվում է  
համեմատաբար վոչ այնքան մեծ առարկաների  
կազմության ուսումնասիրությամբ. այդ առար-  
կաները թեթև են և գլխավորապես լինում են  
ձեռքի տակ յեղած նյութերից, վարոնք պիտի  
նմանվեն բնության իսկական առարկաներին  
և տեղական պարագային (քարերին, ծառի կոճ-  
ղերին, թմբերին, խաչերին, ցանկապատերին,  
քանդված հնոցներին և այլն): Սկզբանական  
քողարկումը փորսնում է մարտական պարա-  
գայում, այսպես կոչված, «սկզբանական»:

Սկզբանական - մաքետներից քննենք ամենա-  
հասարակները, վորոնք կարող են դիտողի հա-  
մար ծառայել իրքի ծածկաբան:

1. ԿՈՇԴՂ-ՄԱՔԵՏ: (նկար 15), կոճղ-մաքե-  
տը իրքի դիտակետ պետք է շինել հետեւյալ ձեռվ:




Նկար 15

Կոճղի կմախքը շինվում ե փայտյա բարակ և նեղ տախտակներից ( $2'' \times 2''$ ), ինքը գլանաձև է, հիմքը յերբեմն շինում են ձվաձև։ Կոճղի կմախքի համար բարակ տախտակների տեղ կարելի յե գործածել բարակ ձողիկներ, ճիպուններ, ուռենի շվեր, յերկաթալար և այլն։ Կմախքի վերևը պիտի ծածկել փայտյա շըջանակով։

Կոճղի կմախքը պետք ե շինել պինդ, վորպեսզի ուժեղ քամուց, անձրեխց, կարկտից և այն չքանդվի։ Կոճղի արամագիծը  $10\text{-}12$  վերշուկից ավելի չպետք ե լինի, վոր մոտավորապես համապատասխանում ե ծառի ամենահաստ բնին։

Կոճղի բարձրությունը  $1\frac{1}{4}$  արշինից ավել չպիտի լինի։ Կմախքի շուրջը պետք ե ծածկել ծառից կեղեսով, վորը պիտի ամրացնել 2-3 գյույմանոց մեխերով։ Յերբեմն ծառի կեղեվը կարելի յե փոխարինել կարտոնով, ֆաներով կամ կպրած հասա կարտոնով։ Վերջին դեպքում կոճղի շուրջը պետք ե ներկել ծառերի կեղեի գույնին, իսկ վերեի մասը ծառի սղոցվածքի գույնին համեմատ։ Մաքետի

ներքեում ոգտակար ե ամրացնել փոքր գորգ-քողարկի կտորներ, վորոնք խոտի տպավորություն կթողնեն։




Նկար 15

Մաքետի, դեպի հակառակորդի կողմը ընկած մասի վրա, իսկ յերբեմն ել յերկու կող-


քից, ուղղանկյուն կամ ձվաձև ծակ պիտի անել, և ծածկել բարակ յերկաթալարով կամ թոկացանցով։ Այս ծակը դրսի կողմից ծածկվում է կափարիչով, վորը մաքեափ ներսի կողմից բացվում ե փայտյա լծակով։ Այս ծակը 2-3 վերշոկից ավելի չպիտի լինի։ Մաքեալ պետք է դնել գիտողի համար փորած փոսի վրա։ գիտողի գլուխը և իրանի վերեկի մասը պիտի տեղափորվի կոճղի ներսում։ Կոճղը պետք է ամրացնել գետնին սեպերով և լարով։ (Նկար 15)։

2. ՔԱՐ-ՄԱՐԵՏԸ, իրրե գիտակետ։ (Նկ. 16)։ Կմախքը շինվում է փայտից, բայց կարելի յե պատրաստել և հաստ լարից։ Լարը պետք է ունենա 3-7 միլիմետր տրամագիծ և հյուսվում ե այնպես, ինչպես 16-րդ նկարում ցույց ե տրված։ Պետք ե ավելացնել, վոր լարերը իրար խաչաձև հանգեղելիս պիտի կապվեն իրար հետ։ Այդպիսի մաքետների չափերը զանազն կարող են լինել թե ձեռվ և թե մեծությամբ։ Այդպիսի մաքետի լարապատ կմախքի վրա դրսի կողմից պետք է քաշել տոպրակացու կտոր, կարտոն, կպրած հաստ կարտոն

կամ մի վորեկ կտոր և ներկել շրջապատող քարերի գույնին, յերանգներին և նըրերանգներին համեմատ։ Մնացած բոլոր բաները սարքում են այնպես, ինչպես կոճղ-մաքետի համար։



Նկար 16




Նկար 16

3. ԽԵԶ-ՄԱՅԻՍԻՑԻ իբրև դիտակետ. Այս մաքետը պատրաստվում է կամ այն տեղում, վարտեղ պետք է կանգնեցնել նրան, և կամ կարելի յեւ առաջուց պատրաստել:

Յերբոր խաչը շինվում է միապաղաղ փայտից, այն ժամանակ պետք է դիտել գերեզմանի վրայից. բայց ավելի լավ է շինել տախտակի կտորներից խողովակի (ողանցքների) ձևով և


խաչի տախտակի վրա բաց արած ծակով դիտել խաչի ներսը դրած շրջադիտակով։ Խաչը պինդ պետք է անկել, ցածացնելով նրան մինչև գերեզմանի կմախքի ներքեմի շրջանակը և այնտեղ մեխել հիմքի տախտակին կամ իջեցնել նրան մինչև փոսի հատակը և թաղել հողի մեջ։ Գերեզմանի դրսի կողմից կմախքը պիտի ծածկել ցանց-քողարկով, վոր պետք է հույսված լինի լորտկներով և ներկած լինի խոտի գույնին, կամ կարելի յեւ և ծածկել ցանցածե հիմքով գորգ-քողարկով։ Կմախքը նույնպես կարելի յեւ պատել կտըրած հաստ կարտոնով, սովորական կարտոնով, տախտակներով կամ վորեւ մի ուրիշ նյութով և հետո ներկել նրան հողի գույնին կամ հողով ծածկել։ Տախտակից շինած խաչը պիտք է ներկել գերեզմանոցի սովորական խաշերի գույնին։ Այսպիսի մաքետը արձակ է և դիտողը կաքող է ազատ շարժումներ անել։ (Տես նկ. 17)։




Նկար 17

1. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԽՈՏԻ ԴԵԶ: (Նկար 18): Խոտնարքի կամ ցորենի հնձի ժամանակ, դիմողի համար կարելի յե հեշտությամբ շինել խոտի և ցորենի կեղծ գեղեր և բարդեր: Դեզի կմախքը պետք է շինել ներքեմի հաստ կողմը որած

Այս տեսակի  
մաքաները, վո-  
րոնք անպայման-  
նման են բնական  
առարկաներին, ինչ-  
պես արդեն տե-  
սանք, կարող են  
պատկեր ացնել  
նույնպես սպանված  
ձիու, զինվորի և  
այլն դիմակ, այս գեղ-  
քում դիմողի զլու-  
խը կլինի մաքետի  
ներսը, իսկ իրանը  
փոռում՝ մաքետի  
տակ:



Նկար 17



տնկած ձողերից, դեզի շրջանի ձեռվ, միմիանցից մի արշին հեռավորությամբ։ Վերևից ձողերի բարակ ծայրերը պիտի հավաքել և միասին կապել։ Շուրջը ամբողջ բարձրությամբ, մի արշին միջանցներով, ձողերը պիտի միացնել խոտորնակ կապերով՝ բարակ ճյուղերով, կամ հաստ լարով, այնպես, վոր ամեն մի քառակուսի անցք ամբացվի խոչմերուկ բարակ լարով կամ թոկով, շեղագծերի ուղղությամբ։ (Տեսնկար 18)։ Դրսի կողմից վերեվից մինչև ներքեւ կմախքը պետք է ծածկել կամ ցանց - քողարկներով, զորած՝ խոտից, ճյուղերից, լորակից, խծուծից և այլն։ և ներկել չոր խոտի գույնի ներկով կամ ծածկել հյուսած գորգ-քողարկով։

Դեզի ներսը դիտողի կամ գնդացրի համար, նայած թե ինչ ե պահանջվում, ձեռքի տակ յեղած նյութից պիտի շինել վորքիկ հրապարակ- (ոգտակար ե այս հրապարակը վահանավորել գնդակից ազատ մնալու համար),

Դեզի հակառակորդը ուղղված կողմում, անցք պետք է բանալ դիտելու համար. անցքը ծածկել ցանցով և կափարիչով, այնպես, վոր դեզի ներսից դիտողը, ըստ ցանկության, կարողանա բանալ և ծածկել։ Հակառակ կողմից անցք է բացվում դեզի ներսը մտնելու համար։

ԽՐԱՄԱՏՆԵՐԻ, ԽՐԱՄՈՒՂԻՆԵՐԻ  
ՅԵՎ ՈՒՐԻՇ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ՔՈՂԱՐԿՈՒՄԸ

1. ԽՐԱՄԱՏՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ.

Խրամատի նկատմամբ, ամենից առաջ պետք է կիրառել այն քողարկումը, ինչ վոր ցույց է տրված 1 մասում. այսինքն, խրամատը պետք է քողարկված լինի տեղանքի ոելլեմա-պատճանական, տեսարանու-պատճանական և գոնա-պատճանական հատկություններով: Բացի դրանից խրամատը շինելու ժամանակ, փոսր փորելիս, հողի վերին շերտի ճիմերը և կոշտերը վերցնելուց հետո (հողապատճեղի ներքին թեքությունը ծածկելու համար), բուսական մթնագույն հողի առաջին շերտը պետք է կիսել փոսր յետեղ և, խրամատը փորել վերջացնելուց հետո, շաղ տալ հողապատճեղի յերեսը, վարովիետ

Ներքեի շերտերը հաճախ ավելի բաց դույնի յեն լինում և ապաքողարկում են հողապատճեղը:


Հետո կարելի յե կիրառել արվեստական քողարկումի հետեւյալ ամենահասարակ ձևերը:

ա. Հողապատճեղը տեղանքի գույնին համեմատ կարելի յե քողարկել ճիմերով, խոտի գույնին, ձմեռը՝ ձյունով, ծղոտով՝ յեթե նրա շուրջը խողան ե. ճյուղերով՝ յեթե նրա շրջապատռմ շատ թփեր կան. և այլն: Բայց չպետք է մոռանալ, վոր ճիմերը և ճյուղերը չօրանուին ընդունակ են դեղնելու, այդ պատճառով այս քողարկումը պետք է նորոգել:

բ. Խրամատի փոսր ողային հետախուզությունից պահպանելու համար, պետք է քողարկել յետ ծովփող ցանցավոր շրջանակներով:

Շրջանակը պատրաստվում է 6 արշին (4 մետր) յերկարությամբ և  $2\frac{3}{4}$ —3 արշին (2 մետր) լայնությամբ: Շրջանակի վրա պիտի քաշել լարից կամ թոկից հյուսած ցանց 2—3 վերշոկ (մի կողմը 10 սանտ.) քառակուսիներով: (Տես. նկար 19):

6.




Նկար 19

Յանցի մեջ պիտի հյուսել լորակ, խոտ, մամուռ, ճյուղեր, շորի կտորներ և այլն, և ապա ներկել տեղանքի գույնին համապատասխան։ (Տես նկար 19 և 20.)

Շրջանակի այն կողմը, վոր դարձած ե գեղի փոսի յետեի պատի կատարը, պետք է ամրացնել փոսի յետեի յեզրի յերկարությամբ՝ ձգած և հաստատված ձողի վրա։


Յեթե հարկավոր ե հրաձգության համար բանալ ծածկոցը, այն ժամանակ շրջանակի ազատ ծայրը ըիչ բարձրացնում են և սեպերի վրա հենում։ Այսպիսի շրջանակները հնարավորություն են տալիս արագ կերպով բաց անել-




Նկար 20

Խրամատը կամ ծածկել մաս-մաս մինչև 6 արշին յերկարությամբ։


Նման կափարիչների անհարմարությունը նրանումն ե, վոր նախ անհարաժեշտ և ունենալ բրեր կամ հենարաններ շրջանակի տակը դնելու համար և ապա՝ գետնի յերեսից դիտելու համար նրանք տեսանելի յեն, յերբ բարձրացըրած են։



Նկար 21



Նկար 21



Նկար 21

## 2. ԽՐԱՄՈՒՂԻՆԵՐԻ ՔՌԴԱՐԿՈՒՄԸ

Խրամուղիների քռղարկելն ավելի հեշտ է այսպես. պետք է նրանց ծածկել լարից և թողից հյուսած ցանցերով, կամ նրանց վրա քաշել կեռմանաձև (զիգզազաձև) ուղղությամբ վառարանային լար, խրամուղու կողքերին խփած բրերի վրա ամրացնելով:

Ինչպես ցանցի, նույնպես և քաշած լարի արանքները պետք է փակել նրանց վրա հյու-

սելով լորակ, խոտ, մամուռ, փոստեր, շորի կը-  
տորտանը և այլն. ապա նեղկել շրջապատող  
տեղանքի գույնին: (Տես նկար 21):

### 3. ԿԵՂԾ ԽՐԱՄԱՏՆԵՐ ՇԻՆԵԼԸ

Լիովին քողարկելով հրածգային խրամատը,  
այլև նշա շուրջը յեղած կահաններն ու խրա-  
մուղիները և առհասարակ այն ամենը, ինչ վոր  
այս կամ այն կերպ կապ ունի խրամատի հետ,  
հաճախ անհրաժեշտ ե լինում մի վորհե տեղ  
խրամատից հեռու, հրածգային կեղծ խրամատ  
շինել հակառակորդի ուշադրությունը վասնելու  
համար: Կեղծ խրամատը, թէ տեսքով և թէ տե-  
ղավորումով, պետք ե բնական լինի. չի կարե-  
լի նրան հակառակորդի համար շատ նկատելի  
շինել: Կեղծ խրամատները հարմար ե շինել  
ճիմեր կտրած տեղերում, յեթե մոտերքում  
կան այդպիսիները:

Կեղծ խրամատ շինելու համար պետք ե  
վորել 2—4 վերշոկ խորությամբ փոս. փոսի  
հատակը կորնթարդ պիտի լինի (կամ փիսրուն  
դարձնել և ներկով քողարկել):

Հողապատճեցը և յետեի կողաթումբը պիտի  
քիչ փոքր անել, բայց ավելի մեծ ուղղորդու-  
թյամբ, վոր ավելի մութը ստվեր կտա:

Հողապատճեցը և յետեի կողաթումբը կա-  
րելի յե հողից շինել, բայց և կարելի յե ձեռքի  
տակ յեղած քողարկության նյութերից, ինչպես  
որինակ. ձողիկներից, շվերից, ճիմից, քարերից,  
ցանց-քողարկից, դորդ-քողարկից և այլն:  
(Տես նկար 22):



Նկար 22

Հողապատճեցը կարելի յե այսպես շինել.  
Ճիմը պետք ե ժապավենի ձեռվ կտրել զետի  
հողապատճեցի կողմը, իսկ հակառակ կողմը թող-  
նել. ապա հրագծի մոտ հողի մեջ ցցեր խփել և  
նրանց վրա զցել հեծան, սրա վրա շարել ձո-  
ղեր, վորոնց մի ծայրը զգուշությամբ պետք ե  
անցկացնել ճիմի տակը, իսկ մյուս ծայրը դնել  
հեծանի վրա:


Այդպիսով կտրած ձիմը կնսածի փայտյառ հիմքի վրա: Կեղծ խրամատներ շինելիս չպետք ե մոռանալ շինել և կեղծ կածաններ, ճահապարհներ, դեպի նրանց տանող խրամուղիներ, վառել խարույկներ և այլն, վոր անհրաժեշտ են խրամատին կենդանություն տալու համար:

#### 4. ԳՆԴԱՑՐԱՅԻՆ ՃԵՏԵՂՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ

Գնդացրիները առավելապես կարիք ունեն քողարկվելու, վորովհետև ամենից առաջ հակառակորդը նրանց ե փնտում և հրետանու կրակը ուղղում դեպի նրանց:

Խրամատների մեջ գնդացրային գետեղները պետք ե ծածկել վերեկից կամ ընդհանուր հորիզոնական քողարկով կամ թե չե նրանց համար հարկավոր ե շինել առանձին ծածկոցներ: Վերջին դեպքում ծածկոցը պիտի շինել նոյն նյութից, ինչ նյութից վոր շինված են խրամատների ծածկոցները, բայց հիմքը հարկավոր ե շինել դեպի վեր ծռած ձողերով, վորպեսզի նըրանց տակ գնդացրի համարները (մարդիկ) աղատ կարողանան շարժվել: Միայն հարկավոր ե

հետեւ վոր դրսի կողմից դուրս ընկած մասը չափազանց շատ աչքի չլինի: Հակառակ դեպքում նրան պետք ե քիչ կոր ձև տալ այսինքն: Քիչ դուրս ցցված անել: (Տես նկար 23):



Նկար 23


Մնացած բանելում գնդացրային բունը հրաձգային խրամատների ծածկոցներից չե տարբերվում: (Նկար 23): Գնդացրի հրետակնատը հարկավոր ե ծածկել շրջանակներով, վորոնց վրա պետք ե քաշոծ լինի ցանց-քողարկ կամ գորգ-քողարկ:

## 5. ՄԱՐՏԿՈՅՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ

Յեթև հրետանին իրեն համար դիրք ե ընտրել ճանապարհի այն մասում, զոր փորած անցկացրած ե բարձրությունների միջով, զոր շատ հարմար է հրանոթը ծածուկ պահելու և հրետանու այդ ճանապարհով մոտենալու համար, այն ժամանակ պետք է հրանոթի համար դիրք պատրաստել և քողարկել այնպես, ինչպես ցույց ե արված 24 (ա. և թ.) 25-րդ նկարներում:

Հրանոթների արձակյուններից առաջացած ծուխը առավել վատանդավոր ե միայն թշնամու դիտող սավառնակների վրա տալու ժամանակ։ Այսպիսի դեպքերում գերադասելի յե՛ կամ բոլորովին կրակ չբանալ, կամ ոգտվել բացառապես անծուխ լիցքերով, զոր առաջուց պետք ե պատրասի ունենալ այդպիսի բողեների նամար։

Ծուխը կարելի յէ քողարկել՝ մարտկոցից հեռու նրան ուղեկից քամու գեմ սպիտակ ծխագլան վառելով (ծխածածկույթների համար)։ Ծխածածկույթների ծուխը լայն շերտով կհամնի մինչև մարտկոցը այնքան նոսրացած, զոր լիովին կը ու-



Նկար 24 ի և 25

դարկի հրանոթների ծուխը, և միենույն ժամանակ չի գժվարացնի հրանոթի մոտ աշխատող հրետավորների շնչառությունը։ Գիշերը կրակը և արձակունի ցոլքը կարելի յե քողորկել հատուկ բոցաշեջներով կամ ու ծխածածկութով, վոր պետք և տեղափորված լինի մարտկոցի և հակառակորդի միջի։


Հրանոթների թնդյունը կարելի յե քողարկել կեղծ մարտկոցով։ Մարտկոցները լավ և տեղափորել ծածկված տեղերում, ինչպես որինակ՝ պուրակի մեջ, անտառի ծայրից քիչ ներսում, անտառի բացատներում և անտառի մեջ բաց արած ճանապարհների վրա և այլն։

Այս գեպքում զլիսավոր ուշադրությունը պետք է դարձնել հետքերի և կածանների վրա։ Խնամքով պետք է փորփրել վարել ծածկել ծառերի ճյուղերով և սերկով քողարկել։

Վորպեսզի հետքերը մարտկոցի մոտ չփեշանան, հարկավոր և ճանապարհներից կեղծ շարունակություն տանել ավելի հեռու և այնպես շինել կեղծ մարտկոցներ։

Շատ հարմար և մարտկոցները կանգնեցնել շինությունների միջև կամ հենց շինությունների մեջ՝ բնակավայրերի վերջում։

Առանձին հրանոթային իրամատների քողարկումները նույնիկերպ են լինում, ինչպես և դնդացիների լիներինը և տարբերվում են միայն իրանց մեծությամբ։ (Եկար 26)։



Եկար 26

Խրամատում պիտի կանգնեցնել յերկու գեղան, սրանց վրա զցել գեպի վեր կորացած պարզունակ ա—բ. սրտ վրա շարել  $2\frac{1}{2}$  վերշոկանոց ձողեր, մի ծայրը պինդ ամրացնել գետնին, իսկ մյուսը կուացնել ցած պարզունակի վրա։ Այ-

Նուհետեա ամբողջ խրամատը ծածկվում է արդեն  
ավելի բարակ վերև գուրս պրծած ձողերով:  
Սյապիսի հենքը վերեից պիտի ծածկել ցանցե-  
րով կամ գորդ-քողարկներով, ինչպես նախըն-  
թաց գեղքերում: Հրետակնատը պիտի ծածկել  
շրջանակով կամ վահանով: Այսպիսի խրամատը  
վերեից յեւեւմ է մի փոքրիկ բլրի նման: Ա-  
վելի բնական տեսք տալու համար, առաջարկ-  
վում է վերեից արհեստական ճանապարհ զձել  
կամ մի գորեե այլ միջոցով բնական բարձուն-  
քի ձև տալ: Հրետակնատի առաջ ոգտակար և  
արհեստական թվեր անեկել, գորոնք ստվեր կը-  
ձբեն և ել ավելի կթաքցնեն խրամատը. բացի  
գրանից, նրանք մասսամբ կծածկեն արձակյուն-  
երի բնկումները:

Հրանոթների համար զանազան տեսակ թա-  
քըսացներ շինելիս, հարկավոր է միջոցներ ձեռք  
տոնել նրանց բացավառվելու գեմ: Որտ համար  
ավելի զերադասելի յե կժախքը ծածկել լարից  
հյուսած հիմքի վրա ցանց-քողարկներով և  
հիմքի հարկավոր տեղերում ազրեատով կամ ու-  
րիշ անկիզելի նյութով զատման յենթարկել:

## ԶՈՐՔԵՐԻ ՖՈՂԱՐԿՈՒՄԸ ՇԽԱՄԱՄ- ԿՈՒՅԹՆԵՐՈՎ

Ծխածածկույթները (ծխի վարագույթները)  
պատկանում են «հրաքիմիական քողարկումի»  
բաժնին:

Ծխածածկույթները գործադրվում են թրշ-  
նամուն ժամանակավրապես կուրացնելու հա-  
մար, նրան շրջապատելով գեղի նա շարժվող  
ծիփ շերտի քուլաներով, կամ հակառակորդի  
դիտողության դաշտի մի վորոշ ժամը ժամա-  
նակավոր կերպով ծածկելու համար:

Ծխածածկույթները կարելի յե առաջաց-  
նել ձեռքի տակ յեղած նյութերից, ինչպես որի-  
նակ. թաց ծղոտից, աղբից, խեժոտ փշատերե-  
ծառերի ճյուղերից և այլն, վոր պետք ե վա-  
ռել խարույկի նման:

Յերբոր մենք հարձակում ենք գործում  
հակառակորդի վրա, հրետանին կարող ե ծիփ-  
ծածկույթ առաջացնել, արձակելով մեր զորքի  
գլխի վրայից այնպիսի արկեր (զնդիքներ), վո-  
րոնք պայմանական կանդնեցնում են մեր և հա-  
կառակորդի միջև լայն շերտով խիտ ծխի ամպ:

Վերջապես ավելի հոճախ ծխածածկութեներ ստանալ կարելի յե ամեն ցանկացած ըռպելին, առանձին ծխազլաներից:

Ծխազլանները լինում են յերկու տեսակ. սեփ չեք կարմիր կտփարիչով:

Սև կտփարիչով գլանի ծուխը առողջության համար բոլորովին անվաս և և ունի սեգույն:

Կարմիր կտփարիչով ծխազլանները տալիս են սպիտակ թունավոր ծուխ, առողջության համար վետուակար և, այնպես վոր այդ ծխի մեջ չի կարելի մնալ առանց հակազագերի:

Ծխազլանները ծխային բաղադրությամբ լցված կարտոնի գլաններ են, վրոնը ունեն 30 սանտ. յերկարություն, 8 սանտ. արամագիծ և  $3\frac{1}{2}$  գրանքա ծանրություն. բոցավառելու համար կտփարիչի մեջ կա շիման հարմարանք:

Ծխազլանները վառելու համար պետք ե շիման հարմարանքից լարը ձիգ տալով հանել կամ թե չե, յերբոր շփող մասը չի վործի, պետք և վառել հարեան վառվող գլանից, վորի համար նախորոք պիտի ովինով բաց անել ծխազլանի

կտփարիչը: Վառած ծխազլանը կարելի յե ձեռքով բանել անդափոխելու կամ շպրտելու համար: Գնդակի հարվածից ծխազլանը չի բոցավառվում:

Ծխազլանը վառվում և 4 բոպեյի ընթացքում, բայց վորովհետև՝ քամին ծուխը միանգամից չի տարածում, որա համար կարելի յե հաշվել, վոր մի գլանը կարող և ծածկութալ 5—6 բոպեյի ընթացքում:

Ծխազլանը վառելու միջոցին խոնավ տեղում կամ ձյունի վրա ավելի լավ և ուղիղ գանգնեցնել, թեև նա կարող և վառվել և պառկած վրությամբ:

Վառած գլանը ջուրը ձգելիս հանգչում և, յեթե վառվող անցքի միջով ջուր մտնի: Խորը ձյունի մեջ գլանները հարկավոր և կանգնեցնել արորած տեղում:

Գլանները վառվում են թե ձյունի և թե անձրեի տակ:

Սև ծխազլանների ծուխը առողջության համար բոլորովին անվաս եւ:

Յերբ գլանները բցվում են վոչ ավելի քան

2 արշին իրարից հեռու ծխի մեջ շնչելը  
հեշտ է:

Յերբ ծխագլանները քցվում են  $1\frac{1}{2}$  արշին իրարից հեռու, այնքան խիտ ծուխ և ստացվում է այնքան բարձր տաքություն ելինում, վոր ծխի մեջ մնալը շատ դժվար է: Այս հատկությունից կարելի յէ ողտգել ամրությունների վրա զրոն տալու ժամանակ, հակառակորդին, այսպես ասած, «ծուխ դնելու» համար: Այս գեղքում ավելի լավ է զործադրել կարմիր կափարիչով ծխագլաններ:

Ծխագլանները կարելի յէ շպրտել կամ դնած՝ 20-25 քայլ հեռավորության վրա, իսկ պառկած և ծնկած՝ մինչեւ 15 քայլ:

## ՄԻԱՄԱՇԿՈՒՅԹՆԵՐ ԱՌԱՋԱԳՆԵԼՈՒ ԸՆԴՀԱ- ՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Ծխածածկություններ կարելի յեւ առաջացնել բոլոր յեղանակներին, նույնիսկ ամենառեմեր քամի յեղած ժամանակ (մինչեւ անդամ բուքի ժամանակ), և ցանկացած կողմում քամու ամեն ուղղության դեպքում:

Քանի դեռ զորքերը չեն ընտելացած ծխածածկությունների ազգեցության տպավորությանը, պետք է խուսափել ուղղակի դեպի իրան փչող քամու ժամանակ ծածկություններ առաջացնելուց:

Ծխածածկություններ առաջացնելու համար ամենաանըարենաջող յեղանակը — բոլորովին քամի չլինելն է (անզորը յեղանակ), վորովհետև այդ յեղանակին ծուխը բարձրանում է ուղիղ վերև, առանց տարածվելու գետնի վրա, և վառված ծխագլանների միջև գոյանում է ծխով չբռնված բաց տարածություն, վոր ծխով ծածկելու համար, պահանջվում է ծախսել մեծ քանակությունը ծխագլաններ:

Մի գլանը շատ քիչ ծխային ազգեցություն է թողնում, այդ պատճառով ծխածածկություններու համար հարկավոր է վերցնել միաժամանակ առենաքիչը 15 գլան, շպրտելով նրանց իրարից 2-6 արշին հեռավորության վրա:

Ինչպես փորձով սահմանված է, ծխագլաններից մի քանի վարկյանում կարելի յեւ վարդույլը ստանալ 25-100' ստժ. բարձրությամբ և մի քանի վերստ ճակատի յերկարությամբ:

Ծխագլանների ծախոռումը միջին հաշվով 5 րոպեյի ընթացքում 1 վերատ յերկարությամբ ճակատի համար հարկավոր է • 250.300 հատ ծխագլան բանեցնել: Սրանց ընդհանուր քաշն և մաս 25 փութ, այսինքն, մի ծանրություն, զարի տեղափոխության համար պահանջվում է յերկու յերկանիվ կամ մի յերկձի սայլ:

Անհամաշխատ բաղկային զրոհ ավող զորամասը ինքը կարող է ծխածածկութներ սոսացնել, փորավիճակ զրոհ ավող հրածգույին խըմբակների տևեն մի հրացանածիզ, քանի փոք ծխագլանի քաշն և 3<sup>1</sup>/<sub>2</sub> գրվ., կարող է ունենալ զոչ պակաս քան յերկու ծխագլան, զարոնք, վառվում են 8—10 րոպե:

Գլանների դասավորման խտությունը ծխածածկութների մեջ կախված է յերկու պատճառից:

1) Հակառակորդի մոտիկությունից և 2) ծխածածկութի ճակատի նկատմամբ՝ քամու ուղղությունից:

Հակառակորդին մոտիկ յեղած ժամանակ ծխագլանները մեկմեկուց պիտի տեղափոխված լինեն:

Հակառակորդի 500ք. հեռ. վրա—6ք. մեկը մյուս. հեռ.


» 500—300 » —4 » » »

» 300—100 » 3 » » »


» 100 և պակաս » —2 » » »

« Ծուխ գնելու » համար » —1<sup>1</sup>/<sub>2</sub> » » »

Յեթե քամու ուղղությունը ծածկութին զուգահեռական է (ծխածածկութի յերկարությամբ)—6 քայլ մեկը մյուսից հեռու, յերբ քամին ուղղանայաց և ծածկութին—3 քայլ և յերբ թեր և՝ 4—5 քայլ: (Տես նկար 27)



Քամու ամենաբարեհաջող ուղղությունն եւ, ուր հարձակման ճակատի նկատմամբ՝ շեղ կամ ուղղահայցլինելը, յերկու դեպքում եւ դեպի հակառակորդի կողմը: (Տես նկար 28):



Նկար 28

Ծխածածկույթները ուղղմական դործողությունների ժամանակ կարող են կիրառվել, նրանք առաջական ունենալով.

1. Քողարկել զորքի աեղափոխությունը մի բնագծից մյուսը.
2. Ճածկել ոժանդակի մոտե-


նալը. 3. թոքցնել զորքերի խրամատներից դուրս գալը. 4. քողարկել տանկային զրոհը և տանկերի գործողությունները. 5. զուոյթի ժամանակ հաղթահարել արհեստական արգելքները. 6. հեշտացնել հեծելազորին մոտենալ ու զրոհ տալ. 7. պարտիզանական պատերազմի ժամանակ, հակառակորդի մեծ ուժերին հանդիպելիս, փոքր ջոկատին հնարավոր դարձնել, ծխածածկույթի պաշտպանության տակ յետ նահանջել. 8. հակառակորդին յենթագրել առև, թէ գազային զրոհ և սկսվում և այդպիսով սահպել նրան հակագաղեր հագնել, և նրա մեջ շփոթություն առաջ բերել. 9. փամփուշտներ ու մերձահար զենքեր հասցնել. 10. թաքցնել զորքի ժամանակարդի անցնելը և այլն:

Հակառակորդի հենակետերի վրա զուոյթ տալիս, յերբ պետք եւ արհեստական արգելքները հաղթահարել, գուոյթ տվողները պետք եւ, վորքան հնարավոր ե, զանազան կողմերից ծխազլաներ շպրտեն հենակետի վրա արգելքների մյուս կողմը (Տես նկար 29):

Նկարից յերեսում է, վոր ծխածածկույթների շնորհիվ հակառակորդի համար դժվար է իմանալ արգելքների հաղթահարելու տեղերը և նրանց վրա կենտրոնացնել իր կրակը. այլև համարյա քամու բոլոր ուղղությունների դեպքում (առև նկարը) հակառակորդին կարելի յէ «ծոփ գնելով» խրամաններից հանել:

### ՇԽԱՌԱՄԿՈՒՑՑՆԵՐ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Մի վերս ապրածության վրա ծխածածկույթներ առաջացնելու համար պետք է նշանակել 100 մարդ. սրանցից 75-ը շղթա յեն կազմում, տեղավորվելով մեկը մյուսից 25 քայլ հեռավորության վրա. մնացած 25 մարդը սժանգակ են կազմում ծածկույթին ծխազլաններ մատակարարելու և կրելու համար. Հրամանի համաձայն պետք է վառել միաժամանակ 4 դլան, մեկը մյուսից 6 քայլ հեռու. Այս ծածկույթի պաշտպանության տակ սժանգակը ամեն մեկի համար քերում է գլանների պաշարը. Ծխազլանները պիտի կրել պատգարակներով կամ պետք է դար-



սել տակառների մեջ և գլորելով տեղափոխել  
Պատղաբակի վրա կարելի յե տեղափորել 38  
ծխագլան, վորի քաշը կլինի 3 փ. 13 դրվ., իսկ  
տակառի մեջ կարելի յե դարսել 30 գլան, 2 փ.  
25 դրվ. ծանրությամբ։ Ծխածածկույթին ան-  
դապար զլաններ մատակարարելու համար ա-  
ռանձին ուշադրություն պիտի դարձնել հարկա-  
վոր պաշարը իր ժամանակին հասցնելու վրա։  
Ծխածածկույթի պաշտպանության տակ սկըս-  
վում ե ամբողջ մարտակարգի արագ հար-  
ձակումը։

Հարձակողական մարտի ժամանակ ամենից  
առաջ պետք ե լինում շինել «ծխոծածկույթի  
ոջախներ» և հետո ծածկույթը դարձնել միա-  
պաղագ։ Դրա համար մի խումբ կամավորներ,  
վորքան հնարավոր ե, զլանների մեծ պաշարով  
թաքուն մոտենում են նշան արած բնագծին,  
վորտեղ պետք ե ծածկույթ առաջացնել. այդ-  
տեղ նրանք առաջացնում են ծխածածկույթի  
կարճ ժամեր, այսինքն՝ ծխածածկույթի ոջախ-  
ներ են կազմում և պահում են հարձակման  
ամբողջ ընթացքում։ Այս ծխածածկույթների

ոջախների պաշտպանության տակ միապաղագ  
ծածկույթ ստանալու համար, խմբի մնացած  
ընկերները, արագորեն գեղի նշան արած բնա-  
գիծն են մոտենում, ոգնության համար նշա-  
նակված մարդկանցով։ Սրանք պետք ե ունե-  
նան ծխագլանների մեծ պաշար՝ պատգարակ-  
ներով, տակառներով և քսակներով։ Տեղ հասած  
խումբը ծխածածկույթների ոջախները յերկա-  
րացնում ե գեղի յերկու կողմը։ Յերբոր ծխի  
ամպը բարձրացած ե, ամբողջ ճակատի վրա  
սկսվում ե մարտակարգի արագ և անընդհատ  
տեղափոխությունը գեղի նշան արած բնագիծը։

### ՄԽԱԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ՈԳՈՒՏՆԵՐԸ

1. Ծխածածկույթը գժվարացնում ե հակա-  
ռակորդի հրացանային և հրետանային կրակը.
2. Խխածածկույթը թշնամու տեսողությու-  
նից թաքցնում ե զորքի շարժումը։
3. Ծխածածկույթի պաշտպանության տակ  
հնարավոր ե, թշնամուց աննկատելի մնալով,  
ոժախներ մոտեցնել վճռական և արագ հարված  
հասցնելու համար։ Բարեհաջող պայմաններում

սպիտակ ծխի ծածկույթը գործադրվում ե թշնամուն «ծուխ դնելով» իր խրամատներից դուքս քշելու համար:

4. Ծխածածկույթը գործադրվում ե զառյաշին գրոհի գեղքում հետևակը, կենդանի ուժերով գրոհելու ժամանակ, սքողելու համար:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՔՈՂ ԱՐԿՈՒՄ

### III ՄԱՍ

(Աշխատանքներ, վորոնք կատարվում են հրահանգիչ-մասնագետների ղեկավարությամբ):

#### ԱՌԱՋԱԲԱՆ

Քողարկումի այս հրատարակության նախքննթաց յերկու մասերում մենք տեսնում ենք, վոր ամբողջ քողարկումը լինում ե.

1) Բնական քողարկում, վոր բացադրված ե առաջին մասում:

2) Տեխնիկական կամ արվեստական, — վոր բացադրված ե յերկրորդ և յերրորդ մասերում: Բացի այդ՝ յերկրորդ մասի մեջ ընդգած են քողարկումի այն միջոցները, վորոնք չեն պահանջում առանձին գործիքներ և նյութեր. Նպա-

տակ ունենալով համախմբել յերկրորդ մասի մեջ զորքերի հրամկազմի համար պարտագիր տեղեկությունները, վորպեսզի զորամասները հետախուզության ժամանակ, գիրքերում և մարտում, կարողանան առանց հրահանգիչ-մասնագետների գործադրել այն ամենը, ինչ վոր ամենից անհրաժեշտ է քողարկումի համար և վոր պահանջվում է ժամանակակից պատերազմի պայմանների համաձայն:

Իսկ ներկա յերրորդ մասում մեջ են բերված այն տեղեկությունները, վորոնք անհրաժեշտ են քողարկումը ավելի լայն չափով գործադրելու համար, այդ գործի հրահանգիչ-մասնագետների ղեկավարությամբ:

### I. ՆԵՐԿԱՅԻՆ ԳՈՂԱՐԿՈՒՄ.

ա) Յեթե լուսամուտի կրկնափեղի վրա արած անցքից արեգակի ճառագայթը ներս և թափանցում մութ սենյակը, այն տեղում, վորտեղ ճառագայթն և ընկնում, մենք տեսնում ենք մի ավելի լուսավոր կետ: Բոլորովին այլ բան կստացվի, յեթե լույսի փնջի ընկնելու ճա-

նապարհին, մենք գեմ գնենք մի յեռանիստ ապակյա հատվածակողմ (ալրիզմա) \*): Լույսը հատվածակողմի միջով անցնելիս պատի վրա վոչ թե սպիտակ կետ կգոյացնի, ինչպես առաջ եր՝ այլ մի շերտ, տաս զանազան գույներով:

Այդ գույները գաստվորված կլինեն հետևյալ կարգով. Կարմիր, նարնջի, դեղին, դեղնականաչ, կանաչ, ժանգառի (կանաչալուրք), լուրք (յերկնագույն), լեզակի (մուգ կապույտ), մանուշակագույն յեվ ծիրանի:

Այս փորձը մեզ ցույց ե տալիս, վոր արեգակի ճառագայթը բաղկացած ե 10 զանազան տեսանելի ճառագայթներից: Յեթե այս ճառագայթները միասին են, այն ժամանակ նրանք աչքին տալիս են սպիտակ գույնի զգայություն, իսկ յեթե նրանք վորևէ պատճառով միասին չեն ընկնում, այն ժամանակ տալիս են զոյություն ունեցող զանազան գույները: Սպիտակ գույնը կարելի յե ստանալ նույնպես հետեւյալ գույների զույգ-զույգ միավորումից: Կարմիրը

\*) Ավելի մանրամասն բացատրությունը կարելի յե գտնել այս գրքի վերջում հավելվածի մեջ (Նկար 4 ա):

կանաչի հետ, նարնջին լուրթի (յերկնագույնի) հետ, գեղինը լեղակի (մուգ-կապույտի) հետ, գեղ նականաչը մանուշակագույնի հետ և կանաչը ծիրանագույնի հետ։ Այս գույները զույգ-զույգ կոչվում են իրար լրացուցիչ գույներ։

Այս բանը կարելի յե հաստատել հետեւյալ բավականին հասարակ փորձով։

Գետք ե վերցնել կարտոնից բոլորակներ և վրան կպցնել զանազան գույնավոր թղթիկներ, նայած թե ինչ գույներ ենք ուզում միավորել բոլորակը պետք ե հազցնել սոնսակին և կոթի ոզնությամբ սկսել շատ արտգ պտտել։ Աչքն անընդունակ կլինի մի գույնը մյուսից գանազանել և կստանա կպցրած գույների խառնուրդի զգայություն։ Յեվ իսկապես, յեթե բոլորակի վրա կպցրած կլինեն բոլոր 10 հիմնական կամ զույգ-զույգ յգ լրացուցիչ գույների թղթիկներ, այն ժամանակ բոլորակը մեզ սպիտակ կերեա Յեթե բոլորակի վրա կպցրած կլինեն կամայորեն դանազան գույնի թղթիկներ, այն ժամանակ նրանք կարող են առաջ բերել զանազան ուրիշ գույների զգայություն։

Սրանից հետո քննենք, թե ինչ բան և տարկայի գույնը և թե ինչու միմնույն արեգակով լուսավորված աւարկաները մեզ յերեսում են զանազան գույներով։ Ինչպես ասացինք լույսի ճառագայթները, յեթե ընկնում են բուրը միասին կամ լրացուցիչ գույների հիշած զույգերով, աչքի վրա սպիտակ գույնի սպավորություն են անոււմ։ Իսկ յեթե նրանց միացընենք զանազան քանական քանակով յերկերկու (բարյալու լրացուցիչ գույներ), յերեք յերեք և այն, այն ժամանակ կստացվեն բազմատեսակ գույներ։

Մենք աւարկաներն այն ժամանակ ենք աեսնում, յերբոք նրանք լուսավորված են (զիշերն առանց լույսի և առանց լուսնի մենք չենք աեսնում)։

Ֆիզիքական բոլոր մարմիններն այն հատկությունն ունեն, վոր յերբ լույսն ընկնում և նրանց վրա, նայած թե նրանք ինչ բաղադրություն և մակերեսույթ ունեն, կլանում են արեգակի մի բանի գույնավոր ճառագայթներ, և ճառագայթներն անհայտանում են նրանց մեջ. իսկ

մի քանի ճառագայթներ չեն կլտնվում, և մարմնից հետ են թռչում, այսինքն անդրագառնում են: Յեվ ահտ այս անդրագարձած ճառագայթները, նայած թե նրանք քանի հատ են և ինչ գույների, անդրագառնալուց հետո, ընկնելով աչքի ցանցաթաղանթի վրա՝ այս կամ այն գույնի տպագորությունն են անում:

Պարզ է, վոր որինակ՝ մեզ կարմիր յերեացող առարկան կարմիր ճառագայթներ եւ անդրագարձնում, իսկ մնացած ճառագայթները կլանում կամ թե, բացի կարմիրներից՝ անդրագարձրել եւ յերկու վորիեւ լրացուցիչ գույն, վորոնք փոխվել են սպիտակի և այդպիսով չեն փոխել առարկայի կարմիր գույնը:

Յեթե մաշմինը կլանում եւ բոլոր ճառագայթները, նա մեզ սկ գույնի յեւ յերեւում:

### ՆԵՐԿԵՐ, ՆՐԱՆՑ ԳՈՒՅՆԵՐԸ ՅԵՎ ՆԵՐԿԱԳՈՂԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ

Մենք առարկաները ճանաչում եւ վորոշում ենք վոչ միայն նրանց ձեռվ, այլև գույնով. որինակ. յեթե հրացանաձիգը կանաչ մարգագետին

վրա պառկած լինի և հագին ունենա կանաչ գույնի հագուստ, մենք նրան ավելի դժվարությամբ կնկատենք, քան թե նա հագած լինի սպիտակ, ուս կամ կարմիր գույնի հագուստ. ուրիշ գեպում, յեթե մենք հանկարծ տեսնելու լինենք մի առարկա, վոր ծառի նման լինի, բայց կարմիր գույնի, նա մեր ուշագրությունը իր վրա կզրավե, այս վերջին հանգամանքի շնորհիվ: Ուրեմն ուղմական զործողության դաշտում, առարկաները թաքցնելու համար, ցանկալի յե վոչ միայն նրանց կերպարանքն ու ձեր փոխել, այլև արհեստական կերպով համապատասիրան ներկով ներկել, նրանց մոտեցնելով շրջապատող բնության գույնին:

Քողարկության այն մասը, վոր ուսումնամբում եւ զանազան ներկերով ներկելու արագ և մասսայական միջոցները, կոչվում եւ ներկանողարկում:

Նորմալ տեսողություն ունեցող տշքը ընդունակ եւ զանազանել վոչ միայն հիշյալ 10 չույները, այլև յուրաքանչյուր գույնի մեջ նա կարող եւ նշմարել մինչև 10, այսպես կոչված,

յերանդներ (տոներ), Այսպես սրբնակ. աեսներով ծառի տերեների, ներկած կոռուրի, յերկաթե գուշի և այլն կանաչ գույնը, մենք այդ կանաչ գույնիմեջ պարզ նկատում ենք այն տարբերությունը, վոր անվանում ենք յերանդ (տոն):

Բացի այդ, վորեն գույնի միենույն յերանդի մեջ ել կարող ե լինել վորեն կողմանի գույնի խառնուրդով առաջացած վորքը զանազանություն, վոր կոչվում ե Տվյալ յերանդի նրերանուն: Այսպիսի նրբերանդներ նույնպես կարելի յե նորմալ տեսողությամբ զանազանել վոչ պակաս քան յերեքը: Միենույն գույնը, յերանդը և նրբերանդը կարող են ունենալ զանազան, այսպես կոչված վաւություն, վորը նույնպես վոչ պակաս քան չորս տեսակ կարելի յե տարբերել:

Այսպիսով լավ տեսողությունը պետք է տարբերի գույնը, յերանդը նրբերանդը և վառությունը (պայծառությունը), Առարկաները արհեստական կերպով ներկելու համար պատրաստում են ներկեր:

Ներկերը այնպիսի նյութեր են, վորոնք անդրագարձնում և կլանում են լույսի վօրու գունավոր նառագայթներ, այդ պատճառով ներկերի խառնուրդից սաշացվում են այլ նետեվանիներ, իան գունավոր նառագայթների միացումից:

Որինակ. լույսի գեղին յեվ կապույտ (լուցուցիչ գույներ) ճառագայթների միացումից սաշացվում է սպիտակ գույն, իսկ գեղին և կապույտ ներկերի խառնուրդից սաշացվում է կանաչ գույն. այսինքն, թե կապույտ և թե զեղին ներկերը առանձին—առանձին անդրագարձնում են քիչ կանաչ գույն. բայց զեղին և կապույտ ճառագայթները կամ պահպան են կոմմիանալով՝ սպիտակ գույն են տալիս, և մնում են միայն կանաչները:

Խառնուրդի գեղքում, յեթե միացվող ներկերի վառությունը (պայծառությունը) զանազան ե, այն ժամանակ ավելի վառը խառնուրդի հետեանքի մեջ թողնում ե իր նրբերանդը:

Ներկերի համար իրեն նիւթական գույններ ծառայում են դեղին, կարմիր յեվ լիղակի (մուգ կապույտ) գույները, վորոնցից տարբեր տե-

սակներով և տարբեր քանակությամբ խառնուրդ կազմելով կարելի յէ ստանալ բոլոր գույները, յերանգները և նրբերանգները։ Սրանց բոլորի խառնուրդից ստացվում է սկ գույն։

Այս յերեք գույներից ամեն մեկի նկատմամբ այն գույնը, վոր ստացվում է մնացած յերկուսից կոչվում է ներհակ կամ ընդդիմակ գույն, այսպես որինակ՝ կապույտի համար ներհակ կամ ընդդիմակ գույնը, կինի նարնջին, (վոր կարմրի և դեղինի խառնուրդից և ստացված)։

Լուսանկարչության նկատմամբ գույները բաժանվում են ակտիբիկ (սառը) և փոչ ակտիբիկ (տաք)։ Առաջնները (սառները) սժտված են լուսանկարչական թանթի (պլաստինկայի) վրա ներգործելու հատկությամբ, իսկ յերկրորդները (տաքերը)՝ վոչ։

Ակտինիկ գույների թվին պատկանում են, մանուշակի, լեզակի (մուգ կապույտ), լուրթ (յերկնագույն) և ժանդառի (կանաչալուրթ) գույները, վոչ-ակտինիկ գույների թվին՝ մնացածները։

ԱՄՐԱՊՈՂԻՉԻՉՆԵՐ կոչվում են այնպիսի

նյութեր, վոր յերբ ավելացնում են ներկին, նրան տալիս են ներկվող մակերեսին պինդ կոչելու հատկություն։

Ներկաքողարկումը իրականացնելու համար անհրաժեշտ ե ունենալ.

1) Տեխնիկական միջոցներ, հատուկ գործիքներ յիվ անորներ։

2) Նյութ-ներկեր ու ամրապնդիչներ։

ՆԵՐԿԱՔՈՂԱԿՈՒՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ. Եթեկացան, յերկաթյա գույյեր, կոնֆեր, գոգնոցներ, չափոցներ, բոկարկային ալբոմներ գունափնդիչ յերկիդիդակներ, փորձարաններ, վրձիններ, խոզանակներ, սլահպանիչ-ակնոցներ, յերկաթյա փոցխներ յիվ գետնաբակեր։

ՆԵՐԿԱՑԱՆԸ ներկաքողարկումի համար հատկապիս հարմարեցրած մի ցրիչ-մղան և (ջրհան, նասոս), վրբը ունի առանձին խողովակ և նրա հետ սրսկիչ գործիք։ Ներկացանը ձնշման ազդեցության տակ անդադար սրսկում է ներկերի խառնուրդը։ Միջին հաշվով ներկացանը մի ըոպեյում պետք է մոտ 6 քառ. սաժ. տարածություն սրսկի։ 6 հազորց բաղկացած

Քաղաքիչների խումբը, մեկ ներկացանի ոգնությամբ, ութ ժամյա բանվորական որվա ընթացքում, կարող ե ներկել Յ վերստ յերկարությամբ հրաձգային խրամատի հողապատճեց, հաշվելով և ներկերի խառնուրդ պատրաստելու աշխատանքը, յերբ տեղում պատրաստի ջուր կա: Մոտակայքում ջուր չեղած դեպքում, ջուր կրելու համար հարկավոր և ավելացնել յերկու ջրկիր:

Ներկացանը գործադրվում է առավելապես հողի մակերևութներ ներկելու համար: այսինքն հողապատճեցների խրամատների, հողաթմբերի, շերտափակերի (բլինդաժ) գաղանցների, (կտակոնիր) խրամուղիների համար և այլն:

ԵՐԿԱԹՅԱՆ ԴՈՒՅՑԼԵՐԸ սովորական կոնածե գուղեր են ներկերի խառնուրդ շինելու և ջուր կրելու համար, այն հաշվով, զոր ամեն մի ներկացանին ընկնի վեց գույլ:

ԵՐԿԱԹՅԱՆ ԿԲՆՔԵՐԸ ունեն չորս զույլի ծավալ և տեղափոխելու համար ունկեր:

ԳՈԳՆՈՑԵՐԸ պետք է հաշվել քողարկությամբի ամեն մի հոգուն մեկը՝ շորերը ներկից մաքուր պահելու համար:

ՊԱՀՊԱՆԻՉ ԱԿՆՈՑՆԵՐԸ պետք են ամեն, մի խմբին մեկը, սրսկիչով աշխատողի համար, ներկերի խառնուրդի փոշին աչքը ընկնելուց պահպանելու համար:

ՅԵՐԿԱԹՅԱՆ ԶԱՓՈՑՆԵՐԸ յերեք մեծությաւմք են՝  $\frac{1}{2}$ , 1 և 2 գրգ. ցեմենտ առարկությամբ ամեն մեկից մի հատ պետք է լինի ամեն մի ներկացանին, ներկերի խառնուրդ կազմելու ժամանակ ներկերը և ամբապնդիչները չափելու համար:

ԳՈՒՆԱՓՆԴՈՒԻՉ ՓՈՐՁԱՐՄԱՆԸ ծառայում է ներկերի չորացած խառնուրդի՝ յերանգը վորոշելու համար: Դա կազմված է մի կտոր ումբը բարձրակից, փոքրիկ տափակ կոշտ վրձինից և գանակից: Պատրաստած ներկերի խառնուրդից, փորձելու համար, վրձինով մի քիչ քոռում են ումբը բայի վրա. այս խառնուրդը իր խոնավությունը իսկույն կորցնելով հնարավորություն է տալիս անմիջապես գատել այն մասին, թե խառնուրդը չոր գրությամբ ինչ գույն կատանա: Բաւծ ներկի շերտը մաքրում են գանակով:


ՎՐՁԻՆՆԵՐԸ հատկացվում են ամեն մի

խմբին յերկուսը և գործադրվում են փայտեազորաբար փոքր, մակերեսույթներ ներկելու համար:


ԽՈՉԱՆԱԿՆԵՐԸ սովորաբար խոտից են լինում, հատկացվում են ամեն մի խմբին յերկուսը, ներկերի խառնուրդը շվեդական ձեռվ գործածելու ժամանակ, զործվածքները քողարկելու համար:

ՓՈՅԻԵՐԸ ծառայում են ներկելիս թեք մակերեսույթները պատրաստելու համար:

ԳԵՏՆԱԹԱԿԵՐԸ հողը ամրացնելու համար են. յերկու տեսակ են լինում (առաջ նկար չ0) «ա» և «բ»:



ա.



նկար 30

բ.

ՆԵՐԿԱՅԲՈՂԱՐԿԱՅԻՆ ԱԼՔՈՒՄ. ծառայում են զույնը և ներկերի խառնուրդի կազմը վորոշելու համար: Ալքումը ունի 200 յերես. 100-ը զույն, 100-ը կենդ, կենդը յերեսների վրա նկարված են 10 զույն (հիմնական), այնպես, վոր ամեն մի զույնի համար հատկացրած է 10 յերես, միենույն զույնի 10 զանազան յերանդներով: Առեն մի կենդ յերեսի վրա, ուր նկարված է մի զույն ցույց տված 10 հայտնի յերանդներից մեկն ու մեկի հետ, այդ զույնը ներկված է յերեք շերտ զանազան երերածիներով. իսկ յուրաքանչյուր շերտ բաժանված է չորս քառակուսիկների մի զույնի տարրեր վառությամբ: Հետեւապես 10 հիմնական զույներից յուրաքանչյուրի մեջ, տչը համար հնարավորություն կա զանազանելու,  $10 \times 3 \times 4 = 120$  տարրեր զունային տպավորություններ, իսկ բոլոր 10 հիմնական զույների համար  $120 \times 10 = 1200$  տարրեր զունային զգայություններ. այս հնարավորությունն է տալիս քողարկչին, տեղանքի վորոշ զույնը արագորեն համեմատելու ալբումի մեջ յեղած վորոշ զույնի, յերանդի նըբերանդի և վառության հետ: Յեզ

վորովհետև ալբոմի ամեն մի յերեսում, ամեն  
մի գունավոր քառակուսիկի համար, նրանց տա-  
կի դատարկ վանդակի մեջ, այդ խառնուրդի  
ստանալու համար, հարկավոր ներկերի բեցեպար-  
կա, քողարկիչները արագ կերպով դույլի մեջ  
պատրաստում են ներկի խառնուրդը, փորձու-  
են փորձարարի վրա (աես վերեր), այնուհետ  
(ավելացնելով և ամրապնդիչը) սկսում են ներ-  
կեր Զույգ յերեսների վրա նկարված են յուրա-  
քանչյուր գունավոր քառակուսիկի լուսանկար  
չական նկարները:

## II. ՆՅՈՒԹ-ՆԵՐԿԵՐ ԶԵՎ ԱՄԲԱՊՆԴԻՉՆԵՐ

Քողարկման գործում նյութ-ներկերի և ամ-  
րապնդիչների հատկությունների ուսումնասի-  
րությանը անցնելիս, ներկելու ժամանակ ան-  
հրաժեշտ ե, վորքան կարելի յե, մոտենալ տե-  
զանքի բնական գունավորմանը (գույնին, յերան-  
գին և նրբերանգին): Սակայն ներկված մակե-  
րեռոյթները կարող են յենթարկվել մեխանիկա-  
կան և սթնալորդային աղդեցությունների. վերջապես կարող են զանազանակերպ նյութե-

րից կազմված տարբեր մակերևութներ ներկվել.  
այդ պատճառով նյութ-ներկերից պահանջվում  
է, վոր ունենան հետեւյալ հատկությունները.

1. Գույն.

2. Ներկելու գորություն, (շատ ներկելու  
բնույնակություն \*).

3. Դիմացկունություն.

4. Անթունություն և.

5. Աժանություն:

Գույնը պետք ե լինի վառ և, վորքան կա-  
րելը յե, ավելի նման բնության գունավորմանը:  
Ներկի գորությունը հնարավորություն ե տալիս  
ավելի քիչ ներկ ծախսելու:

Դիմացկունությունն այնպես պիտի լինի,  
վոր ներկը կարողանա դիմադրել բոլոր անբա-  
րեհաջող պայմաններին. (մթնալորդային տե-  
զումներ, տաքության փոփոխություն):

Անթունությունը և աժանությունը անհրա-  
ժեշտ են նրա համար, վոր ամրաշինական կա-  
ռուցվածքները, նույնպես և մարտադաշտի ին-

\*) Ներկի այն հատկությունը, վոր ընդունակ և միե-  
նույն քանակով ներկել ավելի մեծ տարածություններ:

վենտարը — սայլեր, վրահներ և այլն — ներկելու ժամանակ՝ ներկվող նյութերը ծախսվում են մեծ քանակությամբ, և թունավորման վտանգ կարող է լինել, նույնիսկ մարդկանց համար:

Քողարկման ժամանակ, այս կամ այն առարկայի ներկվող մակերեսութները կարող են լինել՝ 1) փայտե, 2) մետաղե, 3) հողի, 4) բետոնի, 5) քարե, 6) կորտոնե և խավաքարտե, 7) գործվածքներ, քաթան, կտավ, բյազ, խսիր, լորակ և այլն): Այդ պատճառով, բացի հիշյալ պահանջներից, ներկերը լույսի, տաքության և ցրտի, խոնավության և այլ արտաքին պայմանների ազդեցության տակ իրանց գույնը չպիտի փոխեն: Ներկող նյութերը մեկ-մեկու հետ խառնելու ժամանակ, այնպիսի քիմիկան փոփոխություններ չպիտի առաջ գան, վոր կարող են փոխել նրանց գույնը առանձին վերցրած:

ԱՄՐԱՊԼԴԻՉՆԵՐ. սրանց նշանակությունը ներկած մակերեսութիւնը վրա քսած ներկի շերտը պնդացնելն է այնպիս, վոր մեխանիկականն և այլ պատճառներից չփշանա:

Նայած թե ներկելու համար ինչ տեսակ

մակերեսութ և նշանակված, պետք է գործադրել հետեւալ տեսակների ամրապնդիչներ.

1. Կպցնող,

2. Զյութային,

3. Յուղային,

4. Յեմենտացնող:

Առաջինին, վերաբերում են՝

1) ՀՅՈՒՍՆԱԿԱՆ ՍՈՍԻՆՁԲ վոր համարվում է լավ ամրապնդիչ, բայց մի մեծ պակասություն ունի — խոնավությունից վախում ե: Գործվածքները դրանով ներկելիս կորցնում են առաձգականությունը: Այդ չի կարելի գործածել յերկաթե, լորակե և հողի մակերեսութներ ներկելու համար

2) ՇՎԵԴԱԿԱՆ ՇՐԵՇԲ. առ բաղկացած է տարեկանի ալյուրից, կերտկը աղից, ջրից և յերկաթի արջասապից (սպիտակ գույների համար յերկաթի արջասապի տեղ գործ են ածում ծծմբաթթվային կավահող և կառլին):

Սրա ըսցեպաներից մեկը հետեւալն է,

Մի դույլ ջրի համար (30 գրվ.) — տարեկանի ալյուր —  $1\frac{1}{2}$  գրվ. յերկաթի արջասպ

— 1<sup>3</sup>/<sub>4</sub> զրվ. կերակրի աղ — 1<sup>1</sup>/<sub>4</sub> զրվ. + ներկ  
— 1<sup>3</sup>/<sub>4</sub> զրվ.: Առաջ պետք եւ ալյուրը ջրի հետ  
յեփ տալ և հետո խառնել յերկաթի արջասպն  
ու աղը:

Յերկրորդ տեսակի ամրապնդիչներին (ձյու-  
թային) վերաբերում են. բոլոր տեսակի վեռ-  
նիճները (լաք) և ձյութերը՝ յուղերի մեջ լու-  
ծած (եփիրի, կտավհատի, սկիպիտարի, նավ-  
թի):

Այս ամրապնդիչները քողարկումի ժամա-  
նակ գործ են ածվում մեծ քանակությամբ.  
սրանք մթնոլորդային պայմանների մեջ դի-  
մացկուն են, բայց անգործադրելի յեն գործվածք-  
ներ ներկելու համար, վորովհետև վերջինները  
դրանցից չափազանց կոշտանում են: Այս ամ-  
րապնդիչներով ներկել հանձնարարվում եւ յեր-  
կաթե փայտե, խսիրե և լորակե մակերեսութ-  
ները:

Լավ եւ սրանցով ներկել նույնպես ցանց-  
քողարկները, գորգ-քողարկները, վորովհետե-  
նրանք ստանում են փայլունություն ու առաձ-  
գականություն:

Յուղային ամրապնդիչները յերեք տեսակ  
են:

- 1) Հանքային յուղեր (լեռնամոմ, նավթ):
- 2) Կենդանական յուղեր (ձկան յուղ):
- 3) Բուսական յուղեր (արևածաղկի, խաշ-  
խաշի, կտավհատի, կանեփի, բնկույզի և այլն  
ձեթեր):

Քողարկության մեջ, բացի հողի մակերե-  
վույթներ ներկելուց, գործադրվում են համարյա-  
գացուապես վերջին բուսական տեսակի ամրա-  
պնդիչները և գլխավորապես ձիթադեղ (ոլիֆ) —  
կտավհատի յեփած յուղը սուսրի (նոթի) հետ  
խառնած:

ՑԵՄԵՆՏԱՑԻՆ ԱՄՐԱՊՆԴԻՉՆԵՐԸ լինում  
են «ողային» — կիր, և «ջրաբաշխական» — պորտ-  
լանդյան ցեմենտ — մանը ծհծած գորշականաչ  
գույնի փոշի եւ, վորը պատրաստվում եւ գործա-  
րանական յեղանակով՝ թրծելով մինչև բնական  
և արհեստական կրակավերի այրվելը:

ՑԵՄԵՆԹԻՆ այն հատկությունն ունի, վոր  
պնդացնում եւ ներկային շերտն ոգի մեջ և խո-  
պավության դեպքում հողի, քարե, յերկաթե  
նավության դեպքում հողի, քարե, յերկաթե

(մասամբ) և բետոնի մակերեսույթների՝ վրաւ Ցեմենտը հինգ անգամ ավելի ամուր է քան կիրը:

### Ն Ե Ր Կ Ե Ր

**ՍՊԻՏԱԿ ՆԵՐԿԵՐ.** 1) կառլին, 2) կավիճ, 3) չհանգցրած կիր, 4) ցինկի սպիտակ (սպիտակագեղ), և արձիճի սպիտակ (սպիտակագեղ):  
**ԿԸՐՄՒԹԻՐ ՆԵՐԿԵՐ.** 1) կարմիր կավաքար (կարմրագեղ), 2) մումիա, 3) այրած սիեննա:

**ԴԵՂԻՆ ՆԵՐԿԵՐ.** 1) դեղին կավաքար (դեղնագեղ), 2) դեղին նավտոլ: Այս ներկը լավ է գործածել հողի մակերեսույթներ ներկելու համար ջրաբաշխական ամրապնդիչի մեջ (պորտանոցան ցեմենտ), վիրիդոնի (ներկ) հետ միասին: 3) վիրիդոնի դեղին ներկը ստացվում է վիրիդոնի և ցինկի արջասպի խառնուրդից:

Վիրիդոնը հանքային ներկ է, բաց մանուշակամոխրագույն, թունավոր չե, ներկելու լավ հատկություն և գույնի զորություն ունի: Պետք է մատնանշել վիրիդոնի բնորոշ առանձնահատկությունը—նրա լուծվածքի (ջրի մեջ): Խառնուրդը զանազան արջասպների հետ տա-

լիս և բոլորովին տարբեր գույներ, որինակ. ա) վիրիդոնը յերկաթի արջասպի հետ խառնած տալիս և կաթաչ գույն, բ) ցինկի արջասպի հետ՝ դեղին գույն, գ) պղնձի արջասպի հետ՝ դարչնագույնի:

Բացի գրանից, վիրիդոնը հատկություն ունի քիմիալես ձիանալու ցեմենտացնող սմբապընդիչների հետ, վորը բավականին պնդություն է տալիս հողի մակերեսույթների յերեսին քսած ներկելու շերտին: Հողի մակերեսույթներ ներկելու մյուս քողարկային ներկերի մեջ վիրիդոնը այս հատկությունների ընորենիվ առաջին տեղն է բռնում: Վիրիդոնի ներկերի բաղկացուցիչ մասերի համեմատությունն այսպես է.—մի գույլ թարմ ջրին (30 կշումաս) պետք է վերցնել 3 կշումաս վիրիդոն, 2 կշումաս արջասպ (ցինկի, յերկաթի կամ պղնձի), 25—30 կշումաս պորտանոցան ցեմենտ:

**ԿԱՆԵՐԾ ՆԵՐԿԵՐ.** 1) Վիրիդոնյան կանաչ ներկ, 2) քըոմային կանաչ, 3) զմբուխտի կանաչ, 4) զլավկոնիտի կանաչ, (սրա տմենալավ ամրապնդիչը շվեդական սոսինձն է):

ԿԱՊՈՒՅՑ ՆԵՐԿԵՐ. 1) ուլտրամարին, 2) կապույտ կորալտ.

ԴԱՐՁՆԱԳՈՒՅՑՆ ՆԵՐԿԵՐ. 1) Վերիգոնյան դարչնագույն ներկ (վիրիգոնի և պղնձի արջասպի խառնուրդը), 2) ումբրա (յերկաթի և մարգանեցի թթվածնատներով ներկած կավ):

ՍԵՎ ՆԵՐԿԵՐ. 1) Ածուխներ—այրած հասարակ վոսկոր և փղոսկոր, 2) հոլանդական մուր:

### ՆԵՐԿԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ ՅԵՎ ԱՄՐԱՊՆԴԻՉՆԵՐ ՊԱՑՐԱՍՏԵԼԸ

Ներկի խառնուրդները պետք եւ պատրաստել աշխատանքի տեղում, այն ժամանակ, յերբոք բեցեպալ վորոշ կլինի. ներկը պիտի պատրաստել գույլերի կամ կոնքերի մեջ:

Ամրապնդիչները պետք եւ ավելացնել, նախան ներկելու բովեն:

ա) ՆԵՐԿԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԳԵՐԸ ԿՊՀՈՒՆ ԱՄՐԱՊՆԴԻՉ-  
ԵՐԸ պատրաստելը.

Սոսնձի կտորները պետք եւ, վորքան, կարելի յեւ լավ ծեծել և լցնել ջրի մեջ. ջուրը կշիռով չորս անգամ ավելի պետք եւ լինի, քան սոսին-

ձը, ջրի մեջ կակլացնել ամենաքիչը 10 ժամ: Հետո նույն ջրում յեփ տալ մինչև նրա կտորների լուծվելը և կիսաթանձր զանգվածք ստացվելը: Սառցնելուց հետո սոսինձը ավելացնել ներկի խառնուրդին:

Մեկ քառակուսի սոժ. մակերեսույթը ներկելու համար (ներկի «հատակ» կազմելն ել հետք հաշված) կգնա մոտավորապես ներկ՝ 1 գրկ սոսինձ՝ 0,1 գրկ., լուծած կավիճ՝ 2,4 գրկ.

Մեկ բանվորը 8 ժամում ներկում ե 5—6 քառ. սոժ.

բ) ՅԱՆՊԱՅԻՆ ԱՄՐԱՊՆԴԻՇԵՐԸ ԽԱՌՆՈՒՐԳԵՐԸ  
պատրաստելը:

Զիթագեղը (ոլիֆ—յեփ տված ձեթը) ներկի հետ պետք եւ խառնել նախքան նրա գործադրելը:

Մեկ քառ. սոժ. տեղ յերկու անգամ ներկելու համար («հատակն» ել հետը հաշված) մոտավորապես կգնա՝ ձիթագեղ՝ 3 գրկ. ներկեր՝ 1<sup>1</sup>/<sub>2</sub>—2 գրկ.: Մի բանվորը 8 ժամում ներկում ե 5—7 քառ. սոժ..

գ) Յեմենացնող ամրապնդիչներով ներկի խառնուրդ պատրաստելը:

Պորտլանդյան ցեմենտը ուղղակի պետք է ավելացնել ներկի խառնուրդին. 1 դույլ ջուր, 3 կշռամաս վիրիֆոն, 2 կշռամաս արջասով և 30—40 կշռամաս ցեմենտ:

### ՆԵՐԿԱԳՈՂԱՐԿՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

Մի ներկացան ունեցող խումբը բաղկացած է՝ 1 ավագ և 5 ուրիշ ներկաքողարկիչներից. Ավագի մոտ ե գտնվում ներկաքողարկման ալբոմը. նա վորոշում է տեղանքի գույնը, յերանգը և նըրբերանգը, ալբոմով գանում է ներկի խառնուրդի համապատասխան բեցեպար. Ավագի ցուցումով խմբի № 1-ը պատրաստում է ներկի խառնուրդը. № 2-ը ձեռքին բռնում է որսկիչ խողովակը և հոսանքին ուղղություն է տալիս. № 3-ը լժակի շարժումով դուրս է մղում ներկը. № №-4 և 5-ը մոտ են բերում ներկի խառնուրդը և ջուրը:

դ) Զանազան մակերեվույրների ներկելը.

1) Հողի ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՆԵՐԿԵԼԸ.

(Հողապատճենների, կողաթմբերի և այլն): Հողի մակերեւույթները ներկելուց առաջ պետք է մաքրել նրանց վրայի աղբը և փոշին:

Յեթե ներկելու համար գետինը հարկավոր պնդությունը չունի, այն ժամանակ, նախքան ներկելը, պետք է պնդացնել գետնաթակերով: (Տես նկար 30):

Ներկելը պետք է կատարվի այնպես, վոր մթնոլորտային տեղումները չանցնեն ներկած շերտի միջով, վորովհետև փչանում է վոչ թե ներկը, այլ նրա տակ յեղած հողը, յեթե նրա տակը ջուր է անցնում (առանձնապես վտանգավոր է թույլ գետին յեղած ժամանակը ինչպես որինակ՝ սեահողը և այլն): Այդ պատճառով հարկավոր է «հատակ» կազմել, այսինքն քսել մի շերտ ամրապնդիչ կամ ապրապնդիչը ներկի հետ խառը, և ապա յերկրորդ անգամ այն դույնով ներկել, վոր քողարկման համար ընտրված կը լինի:


Ներկացանով ներկելը յերկու ականակ է լի-

նում՝ ուղղահայտց, յերբ ներկում են վիրեից, և հորիզոնական, յերբ ներկում են ապագարդփած մակերեսույթի ձալերի այս կամ այն կողմից: (Տես նկար 31):


2. **ՓԱՅՑԵ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՆԵՐԿԵԼՔ.** Փայտե մակերեսույթներ ներկելիս անհրաժեշտ ե «հատակել» (հատակ կազմել). դրա համար հարկավոր ե մորտել, այսինքն, փոս տեղերը մածիկ (դոմասկա) լցնել մետաղյա տափակթիթեղով՝ քարթակով կամ իզմիրով, կոկել բոլոր անհարթությունները, ճաքած տեղերը և այլն, և հետո ներկել: Ներկվածքի հատակը կազմելու համար բեցեպտները կարող են լինել՝ մի գույլ ջրին. ալյուր՝ 5—7 գրվ., մոխրագույն սապոն՝  $\frac{1}{8} - \frac{1}{2}$  գրվ., հյուսնական սոսինձ՝ 1— $1\frac{1}{2}$  գրվ. կամ մի գույլ ջրին. կավիճ (լուծգած)՝ 5—7 գրվ., սոսինձ (հյուսնական)՝  $1\frac{1}{2} - 2$  գրվ., մոխրագույն սապոն՝  $\frac{1}{4} - \frac{1}{8}$  գրվ.:

Ցուղային ամրապնդիչներով ներկելիս (նախընթաց բեցեպտով), հատակի մածիկը պետք է պատրաստել կավիճից և կտավհատի ձեթից, դուրս ձգելով սոսինձն ու սապոնը կամ վերցնել


ԱՆԿԱՆՈՆ ՆԵՐԿՈՒՄ  
(ԱՄԲՈՂՋ ԳԵՏԻՆԵ ԶԻՒՑԿԱՎԱՅ)



ԿԱՆՈՆԱԿՈՐ ՆԵՐԿՈՒՄ  
(ԱՄԲՈՂՋ ԳԵՏԻՆԵ ՃԱՑԿԱՎԱՅ)



ԱՆԿԱՆՈՆ ԲԵՔ ՆԵՐԿՈՒՄ  
(ԱՌԱՑ ԱՍՏԱԽԻ)



ԿԱՆՈՆԱԿՈՐ ԲԵՔ ՆԵՐԿՈՒՄ  
(ԱՍՏԱԽՈՎ)



միայն ձեթ ներկի հետ խառնած (ավելի բավ և ոքրան—կավագարը):

3. ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ, ԼՈՐԱԿԻ, ԽԱՎԱԲԱՐՏԻ, ԿԱՐՏՈՆԻ ՅԵՎ ԱՅԼՆ ՆԵՐԿԵԼԸ. ՆԵՐԿԵԼԸ առաջ գործվածքները և կարտոնը պետք է և «հատակել» այսպես, ինչպես վերեւում հիշված է փայտե մակերեսույթ ներկելու համար:

Խսիրը, լորակը և խավաքարտը քողարկման գործում չպետք է «հատակել»: Ամրապնդիչներից սոսինձը գործվածքների համար ընդունելի չե, այն գեղքում, յերբ գործվածքները առաձգականություն են պահանջում:

Շվեդական շրեշը գործ է ածվում կտորներ (խալաթ—քողարկ), խսիր, լորակ ներկելու համար:

## Կ Ա Մ Ո Ւ Փ Լ Ա Ժ

Կամուֆլաժ կոչվում է ներկելու այն հատուկ սկզբունքը, վոր նպատակ ունի տեսողության խարեցության—առարկաների այլանդակելու վրա հիմնված քողարկումը:

Բնության մեջ քիչ առարկաներ կան, յերկ-

բաշտական կանոնագոր ձեւը վենց ինքը մարդը և այն բոլոր գործիքները, վոր նա իր ձեռքով է շինել, սովորաբար ակնհայտնի կերպով աչքի են ընկնում տեղանքի վրա, վոչ միայն իրանց գունավորումով, այլև ձեւը սունձնապես գժվար և թաքցնել և ներկելու համար գույների ընտրություն անել շարժական առարկաների համար:

Հեշենք վերև ասածները, թե ինչպես լույսը մեր աչքի վրա ազդեցություն է անում:

Ինչ բան է մեզ յերկացող առարկան և ինչից է առաջանում աչքի զգայությունների գումարը, վոր տալիս ե առարկայի մասին վորոշ գաղափար, Աչքը առարկայի վրա զանազանում է այն գույները, վորոնք ստացվում են այս կատային յերանդի և նրբերանդի զանազան ձառագայթների միացումից, վոր մինչև իսկ, յերբ առարկան կլանում ե բոլոր ձառագայթները, ու գույն ե ստանում. այսինքն, առարկան իրենից ներկայացնում է մի շարք զանազան տեսակ գույներ և ստվերներ, վորոնք ծածկում են նրան. (Լուսանկարելիս ստվերները մնում են առանց գույների, վորոնք համենայն դեպս, աչքին տա-

լիս են այնպիսի ոլարդ տպավորություն, վոր միհնույն և թե անմիջապես առարկային նայես-որինակ լուսանկարը): Բացի գույնից և ստվերից մենք տեսնում ենք և առարկայի ուրիշագիծը (առարկայի զծագրության սահմանները): ԿԱՄՈՒՖԼԱԳԻ ինչ ՞ի՞րեւ Ե. — Արհեստական ներկերի և ստվերների ոգնությամբ, իսկ յերեմն ել ուրիշագիծը փոխելով, այլանդակել առարկան, վորպեսզի աչքը առարկայի իսկական նմանությունը բոլորովին կորցնի: Առաջինին (ներկերի և ստվերների նկատմամբ) համելու համար կամուֆլաժական ներկումը ձգտում է առարկայի վրա մութ յերանգների բծեր զցել նրա սահմանների անկանոն գծագրումով, մարդու գլխից վոչ պակառ մեծությամբ (վորպեսզի բծերը, հեռավորության վրա աչքի ընկնող փոփոխություն մտցնեն): Այդ բծերը պետք է զըցել և առարկայի այն մասի վրա, վորոնք ավելի լուսավորված են, դուրս են ընկած (որինակ, մարդու ուսերը, զրահապատի անկյունները և ալին): և ընդհակառակը, ստվերավոր տեղերը չպետք է լուսավորել, ընտրելով այնպիսի պայծառ և բաց գույնի յերանգներ, վորոնք նման լինեն տե-

ղանքի վրա իշխող յերանգներին (խոտերի, տերեների, ծառերի, բարերի և այլն, յեթե կան): Սրա շնորհիվ առարկան բոլորովին կորցնում է նմանությունը: Այս ձևով ներկած զբահապատը, յեթե անցնում է անտառի ծայրի յերկարությամբ, նրան նայելիս անտեսանելի յե մնում, և փորձերի ժամանակ տվել է այնպիսի լուսանկար (պատկեր), վոր միհնույն ծառերի և թփերի տպավորություն և արել, վորոնց վրա նա ձբգիլ է:

ՅԵՐԿՐՈՐԴԻՆ, այսինքն, ուրիշագծի փոփոխությունը համեմու համար որինակ: յեթե մենք, կնգուզով պարկածե, լայն ու անծե խոլաթ հագցը-նենք հետախույզին — նրա մարմնի ձեին այնպիսի զծագրություն կտանք, վոր մարդու զծագրությանը քիչ կնմանվի, իսկ կտմուֆրամով ներկած նույն խալաթը հետախույզին բոլորովին կմիակերպի մյուս տեղական առարկաների հետ:

Լուսավոր և պայծառ գույները սովորաբար մեզ ավելի մոտ են յերեւում, քան թե նրանց կողքին յեղած ավելի մութ գույները: Ընդուն-

ված ե առաջիններն անվանել՝ առաջընկած, իսկ  
յերկրորդներն՝ յետքիած:

Յետընկած գույները մեզյերեռում են խո-  
րացած, հեռու ընկած, և այս տաղավորությունը  
ուժեղանում է այն ստվերներով, վարսնք իս-  
կապես ձգվում են առարկայից:

Ստվերը տեսնելիս, մենք կարծում ենք թե  
յերեք չափավ առարկայի հետ գործ ունենք և  
վոչ նկարի ու վոչ ել հարթության հետ:

Հարթության վրա միացնելով լուսավոր և  
մութ բծերը, կարելի յե սահեղել կեղծ սալվեր-  
ներ, ուշյեթի ասպավորություն առաջ բերել,  
հարթությունը ցույց տալ խորացած: Կամուֆլ-  
յածի զիխավոր պահանջը հենց զրանումն է:  
Մեկ գույնը պետք է լինի առաջընկած, մյուսը՝  
յետքիած:

Տեղանքը քանի բազմազույն և բազմատե-  
սակ ե, այսքան ավելի շատ քանակությամբ  
գույներ պիտի ե վերցնել կամուֆլաժի եղանա-  
կով ներկելու համար: Ավելի մեծ առարկաները  
հարկավոր ե ներկել ավելի մեծ բծերով, իսկ  
ավելի փոքրերը՝ ընդհակառակը:

Յերկրորդ պահանջը՝ ուրվագծի փոփոխումը

պահպանելու համար—հաճախ ամրացնում կամ  
կապում են առարկային զանազան գույների,  
ձևերի և չափերի թփեր, ծառեր, մետաղ, կտոր-  
ներ կամ այլ նյութեր:

### III ԴԱՇԱՅԻՆ ԴԵԿՈՐԱՑԻԱ.

Մարտիկներին և հենց տեղանքը թաքցնե-  
ռն կարելի յե հասնել բազմապիսի քողարկների  
ոգնությամբ, պիրոնք տեղավորվում են հակա-  
ռակորդի զիտողի աշքի և զիտելի առարկայի  
միջն:

Իբրև քողարկներ կարող են ծառայել բնա-  
կան և արհեստական բազմատեսակ առարկաներ,  
ինչպես գոյություն ունեցող և քողարկման  
նպատակով շինված ցանկապատերը, անտառը,  
ճյուղերից շինած ցանկերը, վրա քաշած և ներ-  
կած քաթանը և ալն:

ԴԱՇԱՅԻՆ ԴԵԿՈՐԱՑԻԱՆ զբաղվում է ինչ-  
պես արհեստական քողարկների կազմության,  
նույնպես և նրանց մարտի ոլարագայում տե-  
ղանքի վրա գործադրելու միջոցների ուսումնա-  
սիրությամբ: Արհեստական քողարկներին  
սովորաբար պետք է տալ բնական շրջապատող

առարկաների տեսք, յերբեմն ել արհեստական ձեռվով պետք ե փոփոխել տեղանքի բելյեֆը և տեսքը, ստեղծելով առանձին շինած կմախքների վրա ամբողջ բլուրներ (ներսը դատարկ) — տեղափորելու համար, ինչպես որինակ՝ մարտկոց և այն։ Այդ պատճառով քողարկները մի քանի գեպերում կոչվում են զաւային դեկորացիոններ։ (Քողարկների ամենահասարակ տեսակները, տես II մաս)։

Պորպեսզի գաշտային գեկորացիաներ շինելու խնդիրներին անցնենք, քննենք կտավի վրա նկարած պատկերից աստիճանական անցումը։ Այդպիսի գեկորացիաներ կարող են լինել՝ ինչպես որինակ մենք տեսանք II մասում կեղծ թուփը։ Սակայն այդ թուփը կտավի վրա պետք ե նկարված լինի արտպես, վոր հեռու տարրածության վրա թփի տպավորություն թողնի։

Այդ նկարը նկարչի պատկերի նման չի ունենա իբրև սահման՝ շրջանակը, և նրա վրա նկարված յերկինքը, ամպերը և այն այլ ուրվագծի վրա կունենա կարատներ, իսկ յերկնքի ամպերի և նրա մոտ յեղած առարկաների տեղ կծառայեն իրա-

կան առարկաները, իսկական յերկինքը, ամպերը և լուսավորությունը։

Անցնենք թատրոնական գեկորացիաներին։ Նրանց վրա հեռավոր առարկաները կտավի վրա պատկերով ե ցույց տրված — բեմի վերջում։ Իսկ մոտիկները, հեռանկարի համեմատ զանազան մեծությում, իբրև արդեն զրված ծառերի առանձին գեկորացիաներ և այն։ Բայց համենայն դեպք, ամբողջ կենտրոնական գեկորացիան ամփոփված ե շրջանակի սեղ — (բեմը)։

Իսկ քողարկու նկարիչը պետք ե իր գեկորացիաները միակերպի իրական տեղանքի, իսկական յերկնքի և իսկական լուսավորության հետ։ սա բավականին դժվար և մասնագիտական խնդիր է, և շատերը, շատ ավելի տաղանդավոր նկարիչներ, զործնականում այդ տեսակի պատկերների համար զանվեցին իբրև թույլ քողարկիչներ։

Թատրոնական գեկորացիան նպատակ ունի, միանգամայն վորոշ պայմաններում, չթարցընելով վոչ մի իրական բան, տեսողության ըդգայություն առաջացնել։

Իսկ դաշտային գեղորացիան պետք է բնական լինի, ինչպես ձևով և մեծությամբ, նույնապես և գույներով, վորովհետև նա պետք է հարմարեցրած լինի ամեն տեսակ լուսավորության — արեկ և լուսնի, ու շրջապատող առարկաների մեջ աչքի չպետք է ընկնի: Դիտողությունը կարելի յէ կատարել զանազան տեղերից, և նույնիսկ վերեկց (ողային):

Այսուեղ դիտողի և գեղորացիաների միջև հեռակայությունները մեծ են:

Դաշտային գեղորացիայի (քողարկների) համար արգում են հետեւյալ մասնագիտական պահանջները.

1) Քողարկները պետք է լինեն անթափանց, այսինքն, պետք է թաքցնեն իրենց յետեւմ քողարկվող առարկան:

2) Նրանք չպետք է արգելը հանդիսանան իրանց յետեւմ թաքնված մարտիկների գործության համար:

3) Քողարկները մեզ չպիտի խանգարեն թշնամուն գիտելու ժամանակ:

4) Քողարկները պետք է բնական լինեն,

ինչպես իրանց տեսքով, այնպես ել և տեղագրությամբ (քողարկները պետք է քողարկված լինեն):

5) Քողարկները պետք է դիմանան քամու, մինոլորային տեղումների (անձրի, ձյուն) և այլն ազգեցությանը, այսինքն պետք է ամուր լինեն:

6) Յանկալի յէ, վոր քողարկները լինեն հաստրակ, աժան և ձեռքի տակ յեղած նյութից, արագ պատրաստելու համար մատչելի:

Սակայն պետք է հիշել, վոր քաղարկի նըշանակությունը բողարկված առարկան հակառակօրդի գիտողությունից քահցնելը և յեզ վոչ թե նրա զնդակներից յեզ արկերից (զնդիբներից) պատճենը:

Դաշտային գեղորացիան բաժանվում է յերկու մասի:

#### 1) Քողարկներ և

2) Հասուկ գեղորատիվ կառուցվածքներ:

Քողարկները լինում են յերկու տեսակ՝ ուղղահայաց և հորիզոնական (ծածկույթներ):

Ուղղահայաց փոքր ամենահասարակ քողարկներից մենք լլ մասում արգեն քննեցինք բուփ-քողարկը, հովհար-քողարկը և հովանոց բողարկը.

իսկ հորիզոնականներից՝ բլուր-խողարկը՝ հրանովների համար:


Այս յերրորդ մասում քննենք ուղղահայաց քողարկներից ավելի բարդերը:

**ՑԱՆԿ-ՔՈՂԱՐԿ.**—Գետք և պատրաստել ձողերից: Առաջուց ցցեր պիտի խփել 2 սաժ. (4 մետր) յերկարությամբ,  $1-1\frac{1}{2}$  վերշոկ (10 սանտ.) հաստությամբ ձողերից:

Ցցերը պիտի խփել գետնի մեջ  $1-1\frac{1}{2}$  արշին (1 մետր) և ամրացնել յերկարթալարով կամ հենարաններով:

Այս քողարկը շինվում է մի շաբթ ուղղահայաց կանգնեցրած ձողերից, վորոնց վերևի ծալրերը փռաերից մաքրած չեն: Ձողերը լինում են  $1\frac{1}{2}-2$  սաժ. յերկարությամբ (3 մետր) և իրանց ներքի ծայրով տեղափորվում են առանձին փորած առվի մեջ, վորի խորությունը լինում են մոտ  $1\frac{1}{2}$  արշ. (40 սանտ.), և վորը հետո լրցնում են հողով և վորքով տրորում: Վերեից ձողերը կապում են գրսի կողմից յերկու ուրիշ ձողերով և ամրացվում են մեկ առանձին հորիզոնական ձողի վրա: Հորիզոնական ձողերը կարելի յեւ փոխարինել յերկու կարդ յերկարթալա-


րով, վորոնք հյուսվում են ձողերի արանքում: Այսպիսի քողարկի բարձրությունը կարելի յեւ հասցնել մինչև 2 սաժ.-ի (4 մետր), (տես նը-կար 32), իսկ յերկարությունը վորքան ցանկանանք. նույնը կարելի յեւ շինել և հյուսվածու-



### Նկար 32

ցանկից կամ աղատից, վոր և կկոչվի աղատ-քողարկ: (Տես նկար 33):

Այս քողարկները իրանց կազմությամբ պարզ են, արագ են շինվում, առանձին նյու-




Նկար 33

թեր չեն պահանջում և իրանք ել լավ են քողարկվում, մանավանդ անտառի և թփերի ֆոնի վրա վորտեղ և գրանք պիտի գործածվեն:

Այս քողարկները չեն պահանջում ներկա-քողարկում, բավական յերկար ժամանակ շատ լավ պահպանում են իրանց բնական գույնը և ամուր են:

Սրանցով կարելի յե քողարկել ձանապարհների տեսանելի բաց մասերը, ձանապարհի յերկարությամբ դեպի հակառակորդի կողմը կանգ-նեցնելով. սրանց առանձին մասերը պետք ե-

կանգնեցնել զանազան անկյուններով, առանց ուղիղ զծով գասավորելու: (Տես նկար 34): Քողարկումը վերերկրա և ոդային դիտո-




Նկար 34

դության դեմ ձանապարհների յերկարությամբ շինվում ե այնպես, ինչպես ցույց ե տրված 35-դր նկարում:

Հենարանների համար պետք ե գործածել առավելապես մոտ  $\frac{z}{2}$  վերշ. (10 սանտիմ.) հաստությամբ և մինչև  $1\frac{1}{2}$ —2 սաժ. (4 մետր.) յերկարությամբ ձողեր:


Իսկ մեծ ձանապարհներ քողարկելու համար, ինչպես խճուղին, կարելի յե գործածել նույնիսկ գերաններ՝ 6 վերշով (25 սանտ.) հաստությամբ և մինչև 4 սաժ. (8 մետր) յեր-հաստությամբ

կարությամբ։ Ամբացնելու համար պետք է բա-  
նեցնել լար կամ փայտե հենարաններ։



ակա ա. ս. 53

Ցցած ձողերի միջով, հորիզոնական դիր-  
քով ամբացնուած են լեռեր լար, մեկը հողից գ




53 ակա

արշ. բարձրության վրա, իսկ մյուսը՝ ձողերի ծայրերին:

Սրանց վրա կամ ամրացնում են գորզ-քողարկներ, կամ նրանց մեջում գործում են լարացանց, իսկ սրա մեջ ել հյուսում են ձյուղեր, լրտակ և այլն:

Մի քողարկը մյուսից պետք է դնել 10 սաժ. հեռավորության վրա: Փորձը ցույց է տըմբել, վոր այդպիսի ճանապարհով շարժումը նըկատելի չի լինում, նույնիսկ ոդային դիտողության ժամանակ:

Հովհաննական բարդ բողարկերից (գաշտային գեկորացիա) ըննենք հետեվակի բրիգադի համար բողարկալին անգարի օբյեկտ, վորը գերմանացիները շինել ելին անցյալ իմակերիսլիստական պատերազմի ժամանակ: (Եկար 36):



Նկար 36

Անգարի կմախըրը կազմված է կանգնեցրած հենարանների շարքերից, վորոնք մեջտեղից այս ու այն կողմ աստիճանաբար ցածրանում են մինչև գետին: Այդ հենարանների գլխին վերից, ամրացնում են պարզունակներ, թե յերկարությամբ և թե լայնությամբ, ու նրանց միջի քաշում են մանր հյուսած լարացանց: Բրիգադի համար անգարը յերկարությամբ ու լայնությամբ լինում է 42 սաժ.: Կանգնեցրած հենարանների շարքերի միջի տարածությունը պետք է լինի մոտ 3—4 տրշին: Անգարի ձողացանցը վերից ծածկված է մի տեսակ բնաթելի հյուսվածքով (լայնությամբ 5 արշ. յերկարությամբ 10 տրշին:): Գերմանական տիպի ծանր սույլի վրա կարելի յե 100 հատ այդպիսի հյուսվածքներ բարձել. յեթե ավելացնենք յերկու սայլ հենարանների, պարզունակների և լարի համար, ուրեմն կիմանանք, վոր բրիգադի անգարը շինելու անհրաժեշտ նյութը տեղափոխելու համար հարկավոր և ընդամենը 6 սայլ: Դիվիզիոնի (իր բոլոր զորամասերով միասին) անգար կառուցանելու համար կպահանջվի մոտ 13 սայլ: Ոդային դիտողությունից թաքնվելու հա-

մար, այսպիսի անգար-պատսպարաններ կառուց ցելը, զորբի համար սովորական բարակներ շինելու հետ համեմատած, ավելի քիչ նյութեր և պահանջում:


Անգարը վերկից ներկվում եր այն արտի գույնին, վորի վրա նա շինված եր, կիրառելով և սկսութա-քողարկումը. Նրանց վրա նկարվում ելին ծառեր, թփեր և նույնիսկ արածող ձիերի մաքեաներ:

Գերմանացիները ճանապարհները քողարկում ելին մի քանի բաց տեղերում կիսաշրջանաձև ծածկոցներ կանգնեցնելով նրանց վրասրանք շինված ելին սյուներից, ձողերից, ցանցերից. այս ցանցերը ծածկվում ելին և տեղանքի գույնին ներկվում: (Տես նկար 37):

Ուրիշ գեպքում ճանապարհի բաց տեղարմասը մնում եր դատարկ, բայց ճանապարհից ձգվող ճյուղավորումները ծածկվում ելին հիշաբ միջոցներով:

#### IV. ՀՐԱ-ՔԻՄԻԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ

II մասում հրա-քիմիական քողարկումից մենք քննեցինք, թե ինչպես և ստացվում ծխի



Նկար 37

վարագույթին կամ ձխածածկույթերը, այսպիս կոչված ծխաղլանների ոգնությամբ:

Ներկա III ժամանք քննենք թե ինչպես  
պետք է կեղծ նրբիհներ ու խորօյիներ լին  
կեղծ բռնկոմներ ու տարբաններ առաջանեն:

ԿԵՂԾ ՀՐԴԵՑՆԵՐ ՅԵՎ ԽԱՐՍՈՒՅՑՆԵՐ

Կեղծ հրդեհ սառցվում է խոխիների կույտերից, վրոնց վրա պետք է ցանել նավթ կամ այրվող նյութ և մեջը ձգել ծխածածկոյթի զլանելիք:

Բարվական բարձր բոց և մեծ ծխի խիտ  
ամպ և առաջանում:

2—3 հարկանի շենքի հրդեհի նմանություն  
ստանալու համար, պետք է խարսչյիներ վառել  
կարծեցյալ շինության հատակագծի քառանկյու-  
նու յերեք կողմում, 10—15 քայլ յերկարու-  
թյամբ, յերկար կողմը ուղղած դեպի հակառա-  
կորդ:

Սպիտակ ծխաղլաններ պետք ե վերցնել  
10 հատ, իսկ սկզ 20:

Նախքան վառելը մի քանի բողե առաջ,  
պիտի շաղ տալ յերկու գույլ ձյութ: Վառելուց

հետո կը ակը շարունակվում է 5-6 րոպե, վորից հետո սկսում է քիչ թուլանալ, և ամեն 10-15 րոպեյից պետք է քիչ-քիչ սպիտակ և սև ծխածածկույթի գլաններ ձգել (լնդամենը 20 հատ), վորպեսզի հանգչող հրդեհի նմանություն տա: Հրդեհի ըոցը բարձրանալու է 2-3 սաժ., իսկ ծուխը՝ մոտ 30 սաժ.: Գիշերը կեզծ հրդեհ պետք է առաջացնել նույնկերպ, ինչպես ցերեկը: Ակայս ծխածածկույթի սպիտակ ծխազլանների քանակը պիտի յերեք-չորս անգամ ավելի լինի, քան առ ծխինը, վորովհետև սպիտակ գլանների ծուխը գիշերը ավելի լավ է յերեսում:

վակի ներքեմ մասը պիտի կտրտել յերկարությամբ, իսկ ստացած շերտերը ծալել և կպցնել միմիանց այնպես, վոր հատակ կազմվի, վորի վրա կպցնում են կարտոնի կամ թղթի բոլորակ Խողովակը չորացնում են: Իրեն պայթուցիկ նյութ խողովակի մեջ լցնում են  $\frac{1}{2}$  դրվ. տեսրիլ (կամ 30 մսխալ կայծքարի դինամիտ), 40 մս. պիկրինի թթվուտ և 45 մս. արոտիլ և կարտոնի խիցով (սմբա) ամրացնում, վորը պետք է ունենա ճաթուուկի համար համապատասխան անցք և կողքերը վրա բերելով կպցնում են: Խիցի անցքով, փայտե ձողիկի ոգնությամբ փռու են անում ճաթուուկի համար. առաջ խցկում են բռն-ծին ունեցող ճաթուուկը և բռնծինն ու պատրաստի խողովակը բարակ թոկով կապում:

Խոնավ ժամանակ խողովակը հարկավոր ե  
պահել խոնավություն չանցկացնող շապկի մեջ  
(կպրած կտակ կամ ռեզին):

Այս խողովակները պետք է դասավորել  
խմբակներով՝ չորս-չորս, մեկը մյուսից վոչ պա-  
կաս, քան 6 քայլ հեռավորության վրա, և լարե-  
րով միացնել բաժանարար տախտակի հետ:  
Դրանք պայմենագում են մակածիչով, 6 դյույմա-

Կող հրանոթի արձակունի նմանություն տալու համար, տուփը Յ անգամ մեծ պետք է անել և լցնել  $1\frac{1}{2}$  գրկ. տեսրիլ, ապա գասավորել զետնի վրա մոտ 10 քայլ իրարից հեռու:

Արձակյունների նմանություն տալու ուրիշ  
միջոցներ ել կան: Կարելի յե մի թերթ կարտոն  
վերցնել և խորանարդ ձեմ տուփ շինել: Խորա-  
նարդի կողերը 2 գյույմ պիտի լինի: Տուփի մեջ  
պետք ե տեղավորել վառախի լիցքը, բուծինը և  
դուրս բերել նըանից ելքարական թելը: Հետո  
տուփը պիտի վաթաթել յերկու ուղղությամբ  
լարան, խիտ շարքերով և վրան հյուսնական  
սոսինձ քսել: Չորանալուց ստացվում ե  
պինդ տուփ, վորի ներսի լիցքը բռնկվելիս ու-  
նենում է բավականին ընդդիմադիր ուժ, և զրա-  
շնորհիվ ստացվում ե լավ ձայն: Կարելի յե  
ավելի հասարակ ձեռվ պատրաստել. վերցնել  
մեկ պիրոկսիլինի չոր գլան, վորը պայթելիս 3  
գյույմանոց թնդանոթի արձակյունի ձայն ե  
տալիս: Մեկ չոր և յերկու թաց պլանները

3. դիումանոց շրապելի պայման

սուանալու համար, ոազմական քողարկումի բարձրագույն գպըցը պատրաստել ե մի առանձին փամփուշտ, վորը կազմված ե. 1) կարտունի պարկուճից, վոր մեջն ունի վառոտի լիցք և շփման հարմարանք և 2) պայթուցիկ արկից, վորը պարկուճից դուրս ե. շպըրտավում վորոշ բարձրության վրա:

Թերթերի իրար լավ կպցրած կարտոնե պարկուճը (այստեղ ամրությունն անհրաժեշտ է) 34 սանտ. յերկարություն ունի, ներսի անցքը՝ 4 սանտ. տրամագծով:

Պատերի հաստությունը ներսի տրամագծի  $\frac{1}{5}$ -ից պակաս չպետք ե լինի: Պարկուճի ծայրերից մեկում պինդ պետք ե խցկել 2 դյույմ ( $5\frac{1}{2}$  սանտ.) բարձրությամբ փայտե խցան (խցանն ամրացնել սոսնձով, մեխերով. և կապով): Խցանի կենտրոնում կա 2 միլիմետրանոց տրամանցիկ ծակ, վորի միջով պետք ե անցկացնել շփման հարմարանքի թելը:

Շփման հարմարանքը կազմված ե կարտոնե բոլորակից, նրա միջով անց ե կացրած պինդ թել. բոլորակի այն կողմը, վորը անմիջապես կած ե վառողի լիցքին, ծածկված ե բոնկվող նյութով

յերբոք ուժեղ կերպով թելը ձիգ ենք տալիս, վերջինս շփման բոնկվող նյութի հետ և վառում նրան:

Կարտոնե պարկուճից գուրս թռած պայթուցիկ արկը, վառողի բոցավառվելու ժամանակ, բարձրանում ե 75—100 արշ. բարձրության վրա և 3 դյույմանոց շրապնելի պայթյունի նմանություն ստեղծելու հշանակություն ունի: Այս արկը թղթե կամ կարտոնե գլանաձե պարկուճ է 4 դյույմ յերկարությամբ (10 սանտ.),  $1\frac{1}{2}$  դյույմ (4 սանտիմ.) տրամագծով և 2 միլիմետր տրամագծի հաստությամբ:

Փայտե խցանը, վոր պարկուճի հատակը պինդ փակում է, ծառայում ե և իբրև հեռակայության փողակ: Խցանի կենտրոնական մասից բաց արած անցքի մեջ (Յ մմ. տրամագիծ), ներսում սեղմված ե փոշեվառողը: Շրապնելի պարկուճից արկը դուրս թռչելու վայրկյանին խցանի մեջ յեղած նյութը այրվում ե և մի քանի վայրկյան անց արկի ներսում տեղավորված նյութը բոցավառվում է, չեռակայության փողակի յերկարությունը կախված է խցանի բարձրությունից, վոր պետք ե ընտրել

ըստ ցանկության, նայած թե ինչ բարձրության  
վրա յենք ուզում բռնկում ստանալ:

Շրապնելի պայթյունին աջող կերպով նր-  
մանություն տալու համար, շատ կարեոր է,  
վոր պայթյուցիկ նյութը բավական քանակու-  
թյամբ սպիտակ ծուխ տա:

Ամենից ավելի հարժար բաղադրությունն  
է՝ 10—12 մսխալ քլորաթթվային կալի և 8—10  
մսխալ յեռածմբային ծարիք (անտիմոնի):

Շրապնելի փամփուշտը լցնելիս, ամենից  
առաջ անհրաժեշտ է պարկուճի մեջ դնել շփման  
հարժարանքը: Յերբոք վերջինս պինդ ամրա-  
ցրած կինի փայտե խցանի ներսի մակերևույ-  
թի վրա, պարկուճի մեջ լցնում են՝  $\frac{3}{4}$ —1  
մսխալ ծխատու վառող, վորը պետք է թեթև  
խցել (սմբա տալ) թաղիքի փուրծով ներս թո-  
ղած վառողային բռնկման պատրույզի հետ:  
Ապա պարկուճի մեջ զգուշությամբ ներքեւ ի-  
շեցնել նեռակայության փողոկով արկը: Յեթե  
պարկուճի պատերին քովելը խանգարում է խի-  
ցի վրա իջները, այն ժամանակ, նրան պետք է  
թեթև կերպով, փայտե շտմփուրով ներս հրել:

Փամփուշտը լցնելուց հետո նրան խոնավությու-  
նից պահպանելու համար, ծածկում են պարու-  
ֆինի բարակ շերտով:

Կեղծ շրապնելները գործադրելիս ան-  
հրաժեշտ է զգուշություն պահպանել: Շրապ-  
նելի փամփուշտը բոցավառելիս հանձնարարվում:  
Ենթան կապել 2—3 արշ. (1—2 մետր) յեր-  
կարությամբ մի ձողի:

Այս ձողի ազատ ծայրը հենում են գետ-  
նին, և այդպիսով խուսափում են փամփուշտ  
բոնող ձեռքին յետ թափ տալու, յետահարելու  
ազդեցությունից: Արձակած շրապնելը միշտ  
վորոշ բարձրության վրա է պայթում. այդ  
պատճառով զանազան բարձրությունների վրա  
պայթյուն ստանալու համար, անհրաժեշտ է ար-  
ձակող պարկուճը հսրիզոնի նկատմամբ դնել  
զանազան անկյուններով:

Կեղծ շրապնելների նշանակությունը հրա-  
ծգություն կատարող հակառակորդին մոլորու-  
թյան մեջ ձգելն է. խկական և կեղծ շրապնել-  
ների պայթյուններից թշնամին չի կարող իր  
պայթյունները տարբերել և հետեապես չի կա-

բոլ իր հրաձգության մեջ հարկավոր ուղղումները մարդկան մասին:

## V ԲԱԽՈՎԻ ԳՈՂԱՐԿԱՆ

Բուսական քողարկումը բնական բույսերի  
ծածկույթի ոգտագործումն է, հողի մակերե-  
վույթները քողարկելու նպատակն է:

ԲՈՒՍԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱ-  
ՍԻՐՈՒՄ է.

1. Բուսական բազմատեսակ ծածկույթների մեջ թաքնվող անհատ մարտիկների և նըստցամբողջ խմբակների անտեսանելիության աստիճանը. այսինքն, թե վորքան լավ են թաքնում հրացանաձիգներին զանազան խոտերը, թփերը և այլն:

2. Զանագան պարագաներում և ա հնարագ կերպով հողի բռուսական ծածկությունը ըստեղծել կամ տեղափոխել.

Հողապահնեցնելի քողարկման հիմքի վեցոց-  
ներից մեկը, ինչպես հայտնի յէ, ճամածածկումն  
է, փորի վրա մենք կանգ չենք առնի, փորովե-  
տե մանրամանորեն ուսումնասիրվում ե ամ-  
բաշինության մեջ:

Վարպեսզի համոզվենք, թե մորքան կատարելադրման գործառնությունը միշտ չէ և բարեկաման ամենանոր միջները, համեմատենք հողապատճեցի քողարկման յերկու միջները՝ ճմածածկումն ու ներկազողարկումը:

Մի վերստ յերկարությամբ հողապատճեցը  
ձիմերով ծածկելու համար պահանջվում է, որու-  
3000 փութ ձիմ, 60 բանվորական որ և փո-  
խազբության համար մինչև 50 սալի մի որ վա-  
աշխատահնգը:

Իսկ ներկով քողարկելու համար անհրաժեշտ է. մոտ 6 բանվրական որ, մոտ 100 փութ նյութ և 3 սայլի մի որվա աշխատանք:

Բայց պետք է ասել, վոր ճամասազն  
ամենալավ հետևանքներ ե տալիս, այնինչ ներ-  
կած մակերեռույթը մեծ պակասություն ունի-  
այն և՝ ստվերապատում չունի, մինչդեռ բու-  
սականությունը ստվերապատում միշտ ունի-  
նում է:

Ամենալավ հետևանքի համելու համար  
ինչպես քողարկման հատկությունը լավացնե-  
լու, նույնպես և աշխատանքի ծախումը պա-

կասեցնելու տես սկետից—կիբառվում ե բուսաբողարկումի միացումը ներկաքողարկումի հետ։ այսինքն, հողի մակերեռույթի վրա ցանում են արսդ աճող բույսեր, խոտեր և այլն, և միտժամանակ քողարկում են ներկով։

Յանելու ամենահասարակ և հարմար ձեն ե այն սերմերը ցանելը, վորոնք միշտ լինում են հողի վերին շերտերի մեջ, վոչ ավելի քան կես արշին խորությամբ։

Այն աշխատանքների ժամանակ, յերբ պետք ե հողը փորել (խրամատներ, խրամներ, շերտափակ փորելը և ալին), անհրաժեշտ ե սերմեր ունեցող հողի վերին շերտը կիտել մի կողմ և հետո այդ հողը շաղ տալ հողապատճեցր վրա կամ այն մերկացած տեղերը, վորոնք նշանակված կլինեն քողարկման համար։ Դրանից հետո, անհրաժեշտ ե ջուր ցանել կամ ջրել։

Յերկրօրդ միջոցը՝ մերկ մակերեռույթների վրա խոտերի սերմեր ցանեն եւ

Յանելու համար սերմեր ընտրելիս անհրաժեշտ ե հիշել վոր խոտերը պետք ե նախ ավելի արագ աճող լինեն և հետո, հարկավոր ե ի նկատի

անենալ քողարկման համար նշանակված պետնի տեսակը։

Ժայռոտ գետնի վրա ամենից լավը ե մասմաս ցանել իսկ մնացած բոլոր հողե գետինների վրա բուսաքողարկման համար բավականին հարմար և ցանել «զաշտային» բրում խոտը։

Սերմերը կարելի յե գործածել խառը կամ առանձին-առանձին։ «Տիմոֆեյան խոտ» (Եսավություն և սիրում), կարմիր և սպիտակ առվույտ, վորոմ, քարախոտ և ուրիշները։

Խառնուրդը սովորաբար վերցնում են հետեւյալ համեմատությամբ։ 25 զրկ. «Տիմոֆեյան խոտի» հետ վերցնում են 15 զրկ. աւվույտ և մնացած սերմերից մինչև 50 զրկ.։

Սերմեր չեղած դեպքում հարավոր ե ցանելու համար գործ ածել խոտանոցի խոտի մնացորդները։ Ավազուտ հողում ամենից լավ բուսնում ե ավազային բոշխը (ոսոկա) կամ ավազային տարեկանը։

Ավազային տարեկանը շատ կարենը հատկություն ունի՝ վորքան ավաղ ես ածում, կություն ունի՝ վորքան ավաղ ես ածում, այնքան նոր ձյուղեր ե տալիս. և բացի այդ,

Նրա արմատները տարածվում են մինչև 10 սաժ. յերկարության: Վերջին հատկությունը կարեղ է նրանով, վոր գետինը լավ պնդացնում է: Նրան հարկավոր է ցանել վերջին ձյան ժամանակ և վնշերով տնկել մեկը մյուսից մի վոտնաչափ հեռավորության վրա:

Սերմերի աջող բուսնելու համար, հողը պետք է, լավ փոխուացնել բանով, արորով կամ գութանով և հավասարեցնել յերկաթե փոցխով: Պետք է ցանել ձեռքով, և միջին հաշվով 100 քառ. սաժ. տարածության համար ծախսվում է 5 գրվ. սերմ:

Պարարտացնելու համար ծառայում են. ձիու և կովի աղբը, հողի վերի շերաբ, Փոսփորաթթվային կրի և բորակի խառնուրդը, բորակը, Փոսփորաթթվային կիրը:

Ցանած մակերեսութը պետք է հավասարեցնել յերկաթյա փոցխերով և սկզբում անսպասառ պետք է ջրել: Ցանելու ամենահարմար յեղանակը գարունն է, գարնանացանի ժամանակ, և աշնանը՝ սեպտեմբերի 1—15ը:

Բուսական յեզ ներկային բոզարկում:

Անհապաղ հետեւանքներ ստանալու համար

ցանելը պետք է ներկաքողարկման հետ միասին կատարել. այսինքն, ցանելուց հետո հարկավոր է խելույն ներկով քողարկել: Հողը, ինչպես և նախորդ գետքերում, պետք է լով փոփոլացրած լինի:

Ցանելու համար հանձնարարվում է գործածել «դաշտային բըռմ»-ը. 100 քառ. սաժենի համար անհըաժեշտ է վերցնել 5 գրվ. սերմ (ամեն մի գեսյոտինին 3 փութ):

Նախքան ցանելը ոգտակար է հողը ուղարտացնել կալիոնի բորակով, Փոսփորաթթվային ամոնիոնով և ծծմբաթթվային նատրիոնով (100 քառ. սաժ. տարածության համար՝ 1 գրվ. կամ մեկ գեսյատինին՝ 24 գրվ.): Ներկաւ քողարկումը պիտի կատարել ջրելուց անմիջապես հետո:

## VI ՌԱԶՄԱԿԱՆ ԳՐԻՄ.

Թագմական դրիմը, վորով փոխվում է մարդու արտաքին տեսքը, գործադրվում է առավելապես լրտեսության ժամանակ:

Թագմական գրիմը կազմում է տեխնիկա-

կան և բնական նշաններից. առաջինի տակ պետք եւ հասկանալ մարդու արտաքինի արհեստական փոփոխությունը տեխնիկական միջոցներով, յերկրորդի տակ պետք եւ հասկանալ մարդու տեսքի այնպիսի փոփոխությունները, վորոնք կատարվում են մարդու ինքնուրույն գործողությամբ, որինակ. քայլվածքը, ձեերը և այլն:

**ՈՒՍՏԱԿԱՆ ԴՐԻՄԸ ամփոփում և իր մեջ.**

1. Մազերի զույնի և ձեի փոփոխելը.
2. Յերեսի, այտերի և ձեռքերի զույնի փոփոխելը.
3. Հասակի փոփոխելը.
4. Կերպարանքի փոփոխելը.
5. Հանգերձի, վոտնաստանների, զլխարկի և այլն փոփոխելը.
6. Յերեսի ձեի փոփոխելը.
7. Միմիկայի, ժեստիկուլոցիայի, քայլվածքի, ձեերի փոփոխելը:

**ՆԵՐԿԱՔՈՂԱՐԿՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ**  
ԼՈՒՑՍՐ, ՆՐԱ ԲԵԿՈՒՄԸ ՅԵՎ ՎԵՐԱՌՈՒՇՎԵԼԸ  
Ինչ բան է լույսը լել մեր աշխը ինչպես և  
ընդունում նրան:

Մեզ շըջապատող ամբողջ աշխարհը մենք ճանաչում ենք մեր զգայարաններով (լողություն, տեսողություն, հոտոտելիք, ճաշակելիք և շոշափելիք):

Ակնարկ ձգենք յերկու զգայարանների՝ լուղության և տեսողության վրա, վորոնց միջոցավ մենք ճանաչում ենք յերեսույթները և առարկաները՝ ապահովություն վրա:

Որինակ. յեթե մենք քար ձգենք ջրի հարթմակերեսույթի վրա, կտեսնենք, վոր նրա շուրջը գոյանում են ալիքներ. նրանք տարածվում են չորս կողմը և կարող են տատանման մեջ դնել և ուրիշ առարկաներ, վորոնք գտնվում են ջրի յերեսին. այսպիսով մենք նկատում ենք, վոր ալիքները քարն ընկած տեղից քանի հեռանում, այնքան թուլանում են և վերջապես բոլորովին անհայտանում:

Այստեղ ալեծփման հաղորդիչը ջուրն եր, Ֆիզիկայից հիշենք ձայնի յերեռւյթը, վորը տուաջանում և տատանվող լարից, պայթող վառդից, կացնի ծղանին հարվածելուց. այստեղ իրբն հաղորդիչ, հանդիսանում է ողը, վորը նույնպես, ինչպես ձգած բարի մոտ ջուրը, տատանումներ և անում դեպի չորս կողմը. ողը իր ալեծփումներով մեր ականջի թմբկաթաղանթը դողացնում է (յերբ նա նորմալ է), և առջացնում է մեր մեջ ձայնի զգայություն:

Պետք է ասել, վոր բոլոր մեր զգայարանները բավական կոպիտ են և շատ յերեռւյթներ չեն զգում, յեթե հաջորդող ալիքները թույլ են, գանգաղ շարժվող, կամ լնդհակառակը շատ արագ են տատանվում: Յեթե լարը թույլ և ձգված և թեև նա տատանվում է և ոռաջացնում ողի ալիքներ, բայց մենք ձայնը չենք լսում: Ընդհակառակը. ձայնի վերաբերյալ փորձ կատարելու մի գործիք կա, վորը կոչվում է «Գալտոնի սուլիչ»: յեթե նրա մեջ ոդ փշենք և փշելը աստիճանաբար ուժեղացնենք, ձայնը այնքան կբարձրանա, վոր ականջ ծակող զիլ

ձայնի կհասնի—ոդը ավելի ուժեղ կերպով կտատանվի (վորովհետեւ նրա պտըտվող անիվը, վորը իբրև հաշվեցույց և ծառայում, արագ և պտըտվում), և լսողներից շատերը արգեն կկորցնեն ձայնի զգայությունը: Այս կատարվում է այն ժամանակ, յերբ հաշվեցույցը ցույց է տալիս մի վայրկյանում մոտ 30.000 տատանվող ալիք: իսկ 40.000 և ավելի տատանումների դեպքում վոչ վոք արգեն չի լսի:

Դառնանք տեսողությանը: Փորձեցեք ճաղավոր անիվը արագ պտտել: Պատելու վորոշ արագության միջոցին մենք կտեսնենք անիվի արագության միջոցին մենք կտեսնենք անիվի առղջը, իսկ ճաղերը չենք տեսնի, և անիվը մեր աչքին կերևա ներսը դատարկ:

Ինչո՞ւ վորովհետեւ մեր աչքը իր ցանցաթաղանթի ոգնությամբ, ալիքների իր վրա ընկնելուց նույնպես ընդունում է տեսողության զգայություն: Անիվի ճաղերը մեկ-մեկու յետեկից այնքան արագ են անցնում, վոր աչքը ժամանակ չի ունենում զգայություն ընդունել: Անակ չի ունենում զգայություն ընդունել: Անակ լույսի ալիքները չեն տարածվում վոչ զրի և վոչ ոդի մեջ, այլ ելեքտրական բնույթ

ունեցող մի շատ նուրբ միջավայրում, վոր հայտնի յե գիտնականներին միայն փորձով, այս միջավայրը բռնում է մարմինների և ողի մասնիկների միջև յեղած տարածությունը և նույնիսկ մեր յերկրի մթնոլորտից դուրս—մեր և արևի, լուսնի և այլ մոլորակների միջև յեղած ամբողջ տարածությունը:\*)

Փորձենք հնոցում շիկացնել յերկաթի մի կտոր:

Առաջ նա տաքանում է (իսկ ամեն տաքություն, վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մարմինների տատանումն), և մենք կպչելովնըան, շոշափելիքով իմանում ենք նրա գրության փոփոխությունը, ապա ձեռքը բռնելով վորեւ հեռագորության վրա. զգում ենք նրանից արձակած տաքության ճառագայթները. հետո տեսողության զգայարանի միջոցով մենք տեսնում ենք նեց նրանից արձակվող լույսի ճառագայթները. այսինքն, ալիքները այնքան ուժեղացած են լինում, վոր ազգում են մեր աչքի ցանցաթա-

\*) Նույն միջավայրում եւ գործում են Ռադիոյի ալիքները.

ղանթի վրա և մենք տեսնում ենք յերկաթը կարմրած. յեթե տաքացնելը շարունակենք, աչք կուրացնող սպիտակ ճառագայթներ կտա: Նշանակում ե՝ լույսի տմբն մի տղբյուրը մի վորեւ մարմին ե, վորը տատանման մեջ և դրվում. այդ տատանումները հիշյալ միջավայրում ալիքանման շարժում առաջ բերելով, այդ ալիքները հասցնում են աչքին, և յեթե նրանք բազականաչափ հաճախակի և ուժեղ են, այն ժամանակ առաջացնում են մի զգայություն, վորը կոչվում է լույս:

Լույսի ամեն մի աղբյուրը, որինակ, արեգակնից ներկայացնում է մի գունդ շիկացած մինչև 10.000 աստիճան և ավելի, յերկրագնդից տրամագծով 109 անգամ մեծ, մեզ ալիքներ ե ուղարկում:

Արեգակից և զանազան ուրիշ աղբյուրներից տարածվող ալիքները տատանումների թվով մեկ վայրկանում զանազան են լինում. ինչպես հաշյունը ազգում ե ականջի վրա, մերթ բարձր, մերթ ցածր տոներով, անպես ել լույսը ներգերելով աչքի ցանցաթաղանթի վրա, առաջացգործելով աչքի ցանցաթաղանթի վրա,

նում և լույսի գանազան զգայություններ, իբրև կարմիր, գեղին, սպիտակ և ուրիշ գույներ, կան և անտեսանելի ճառագայթներ, վորոնք գալիս են լույսի աղբյուրից. կամ նրանց տատանումների թիվը քիչ է, վոր ցանցաթաղանթի վրա չի ներգործում (թույլ ձգված լարի նման), կամ տատանումների թիվը այնքան է շատ, վոր աչքով նրանց ընդունելու հնարավորությունը նսեմանում է (Գալտոնի սուլիչը, կամ պտըտվող անիվի ճաղերը):


Մանրամասնորեն քննենք, թե տատանումներին նայած աչքի վրա ներգործող ճառագայթները ինչ տեսակ կարող են լինել և ինչ զգայություններ են պատճառում տեսողությանը, մի քանիսը միասին անցնելու միջոցին (ինչպես նվագարանի մի քանի հնչյունները տալիս են համահնչություն, ակկորդ, վոր նման չե իր բաղկացուցիչ հնչյուններից ամեն մեկին առանձին):

Յերեսում է, վոր արեգակի, ելեքտրական և ուրիշ մի քանի լույսի աղբյուրների մեջ կան 10 տեսակ ճառագայթներ, վոր աչքը հեշտ կեր-

պով զանազանում և նրանց իր վրա արած ներգործությամբ: Յեվ յերբոր նրանք անցնում են միասին (ակկորդով), այն ժամանակը առաջացնում են սպիտակ լույսի զգայություն: Ի՞նչպես պետք է իմանալ թե արեգակի ճառագայթը բաղկացած է զանազան տատանումներով ճառագայթներից:


Այդ կարելի յե իմանալ այսպես. լույսի փունջը յեթե անցնում է միատեսակ պնդությամբ միջավայրով, ինչպես որինակ՝ ողը, ջուրը, ապակին և ուրիշները, այն ժամանակ նա անցնում է ուղղիդ. այսպես ասած ուղղելով իր տողանի ճակատը, իսկ յեթե միջավայրը բազմապիսի է, ճառագայթը բեկվելով փոխում է իր ուղղությունը, անցնում է այսպես ասած աջ կամ ձախ թեհն առաջ, ձիշտ այնպես, ինչպես աջ կամ անցնում է հարթ դաշտից դեպի վարած հողը: (Տես գծանկար 1):

Այս գեպքում ա. զինվորը վարած արտը մտնելով ակամա դանդաղեցնում է իր շարժումը, իսկ լուս գեռ հարթ դաշտով ե անցնում. և ճակատը հագսարման ժայռանակ, կփոխի իր



Գծանկար 1


ուղղությունը. իսկ նորից հարթ դաշտը գուրս զալիս՝ առ կաշխատի համել բնին. Լույսի հետ ել նույնն է պատահում: Լույսի այդ տեսակ անցումը մի միջավայրից մյուսը, կոչվում է՝ լույսի բեկումնի: (Տես գծանկար 2):



Գծանկար 2

Սյօմ յենթադրենք, թե մեր տողանի դին-

փորները (գծանկար 1) ուժով և քայլի չափով միատեսակ չեն. կան չատ թռոյլեր, փոքր քայլերով. կան և ուժով միջակներ, միջակ քայլերով և ուժեղներ, մեծ քայլերով: Այն ժամանակ, ճենց վոր մտնելու վիճեն վարած հողը, յեթե նրանք ցանկանան հավասարվել, կհեռանան իրարից: (Տես գծանկար 3):



Գծանկար 3

թռոյլ առ յետ կմնա, աշխատելով քայլել ակոսների վրայով կտրուկ ձանապարհով, միջակ ուժ ունեցողը՝ բայց ավելի լայն քայլեր անելով, կանցնի սակավ թեքվելով սկզբնական ուղղությունից. իսկ ուժեղ գոյն կանցնի համարյա ա-


ուաշվա ուղղությամբ։ Յեռանկյունի վարած  
արտից դուրս գալիս, գ.ն կհասնի ա.-ին։

Լույսի ալիքները, (քայլի լայնության նման),  
ունինալով զանազան յերկարություն և մի  
վայրկանում տատանումների զանազան թիվ,  
անցնելով յեռանիստ (յեռանկյունի հատվածով)  
ապակյա հատվածակողմի (պրիզմա) միջով,  
կցըրվեն և ցույց կտան իրանց ազգեցությունը  
աչքի վրա, ամեն մեկը առանձին։ (Տես դժա-  
նկար 4 բ. \*):


ա. ճառագայթը կբեկվի բոլորից ուժեղ,  
բ.ն կանցնի մեջտեղից, իսկ գ.ն քիչ կբեկվի։

Յեթե այս փորձը կատարենք մութ սենյա-  
կում, լուսամուտի փեղկի անցքով ներս թողնե-  
լով լույսի փունջ, այն ժամանակ ապակյա  
հատվածակողմի յետեռում մենք լուսավորված  
սպիտակ կետ չենք տեսնի, այլ կտեսնենք մի  
ձգված շերտ՝ Ա. Բ, ներկված 10 զույնով, սկսած  
Ա.-ից՝ 1. կարմիր, 2. նարնջի, 3. դեղին, 4. դեղ-  
նականաչ, 5. կանաչ, 6. ժանդառի (կանաչա-

\*.) 4ա դժանկարի բացատրությունը տես  
յերեւ 71։



Գ.ծանկար 4 ա.



Գ.ծանկար 4 բ.

զուրթ), 7. լուրթ (յերկնագույն), 8. լեղակի  
(մուգ կապույտ), 9. մանիշակագույն, 10. ծիրանի։

Բայց յեթե գիտականորեն ուսումնասիրենք  
այդ զունավոր շերտից (վոր կոչվում ե սպեկտր)  
վերև և ներքեւ ընկած տարածությունը, այն

Ժամանակ կտեսնենք, վոր Բ.-ի մոտ մանիշակա-  
գույն ճառագայթներից ցած կան անտեսանելի  
ճառագայթներ, վորոնք քիմիապես ներդրում  
են լուսանկարչական թանթի (պլաստինկալի)  
վրա և վորոնք կոչվում են քիմիական ճառա-  
գայթներ կամ անդրմանիշակագույն ճառա-  
գայթներ։ Նույնպես և Ա.-ի մոտ կարմիր ճա-  
ռագայթներից դեպի վեր կան անտեսանելի  
ճառագայթներ — ջերմալին ճառագայթներ։



СУФИЗИЗАЧ

## *Ugrikum*—Азбест

**Ակտինիկ** (*актин*)—Актиничный (цвет)

*Чешн*—Плётень

*Идеш-ропшы* — Маска-илетень.

*Чи́дчили фи́нн* — Бездымный порох

*Անկանոն ներկում*—Неправильное окрашивание

*Шибашин դիտող*—Отдельный наблюдатель

Անհատական փողարկ—Индивидуальная маска

*Щитард* — *щабищабищатин*—Неподвижное охр

*Чтобы увидеть мир—Невидимое пространство*

СТВО

*Цементно-известковые швы и растворы* – Фортранционная по-

страйка

*Изгнанник*—Закрепитель

Ապահովական կազմակերպություն

**Национална библиотека „Св. св. Кирил и Методий“ — Затвората Труда**

**Цементировать**— Цементировать

*Иванушки* — Застава

*Առաջավագ՝ Յաշիան  
և աշոնիած հայոն*

**Առաջնորդություն** (քույր) – **Վեցըսպածություն** (մեր)

- Առանձին երանոթային խրամատ—Отдельный орудийный окон  
 Արգելք—Препятствие  
 Արկ—Снаряд  
 Արծակուն—Выстрел  
 Արճիբի սպիտակ—Свинцовое белило  
 Արվեստական րողարկում—Искусственная маскировка  
 Բաժանարար տախտակ—Распределительная доска  
 Բարդ—Копна  
 Բացատ—Пелянга  
 Բեկվածք—Излом  
 Բեռնաթափում—Выгрузка  
 Բեռնավորում—Погрузка  
 Բնագիծ—Рубеж  
 Բնական րողարկում—Естественная маскировка  
 Բնակարանային հանգիստ—Отдых по квартирам  
 Բուժին—Запал  
 Բոշի—Осока  
 Բորшակ—Селитра  
 Բուսական րողարկում, բուսարողարկում—Растительная маскировка  
 Բոնկում—Вспышка  
 Բրիգադ—Бригада  
 Գազային զրոբ—Газовая атака

- Գաղանց—Канонир  
 Գաղանք—Секрет  
 Գետնաթակ—Трамбовка  
 Գիշերային հարձակում—Ночное нападение  
 Գվանաձեկ պարկում—Цилиндрическая гильза  
 Գվալվոնիստի կանոչ—Главконитовая зелень  
 Գնդակում—Обстрел  
 Գնդացրային բուն—Нулеметное гнездо  
 Գնդացրային զետեղ—Нулеметная установка  
 Գորգ-բողարկ—Маска-көвер  
 Գործողության դիտավորություն—Замысел операции  
 Գումակ—Обоз  
 Գունա-պաշտպանական հատկություն—Цвето-защитное свойство  
 Գունավորում—Колорит  
 Գունավնդոիլ-լիրկովիտակ—Бинокль-цветоискатель  
 Գունավնդոիլ-փորձարան—Цветоискатель-пробник  
 Գաշտային բրոմ—Нодевой костёр  
 Գաշտային զեկորացիս—Полевая декорация  
 Գաշտային պահակ—Нодевой караул  
 Գառակ—Взвод  
 Գարան—Засада  
 Գարափուլ—Обрыв  
 Գալրուփու տեղանք—Пересеченная местность  
 Գեկորատիվ կառուցվածք—Декоративное сооружение  
 Գեղնականաչ (զոյն)–Желтозеленый (цвет)

**Դեմք**—Дозор

**Դիմադրության գլխավոր զիծ**—Главная линия сопротивления

**Դիվիզիա**—Дивизия

**Դիտակետ**—Наблюдательный пункт

**Դիտող**—Наблюдатель

**Դիրք**—Позиция

**Դուռը (արհեստական արգելքների վրա)**—Штурм (искусственных препятствий)

**Դուռթափոր**—Штурмующий

**Զատկան յենթարկել**—Изолировать

**Զմրտվածի կանաչ**—Изумрудная зелень

**Զորական ծառայող**—Военнослужащий

**Զորական միմիկրիա**—Войсковая мимикрия

**Զորաշարժ**—Маневр

**Զորաշարժական պատերազմ**—Маневренная война

**Զորայուն**—Колонна

**Զորայունը խտացնել յերկարությամբ**—Сжимать колонну в длину

**Զորայունը ձգել յերկարությամբ**—Растягивать колонну в длину

**Զորություն (ներկելու)**—Интенсивность (окрашивания).

**Զրահապատ**—Броневик

**Հնդդիմակ գոյն**—Контрастный цвет

**Թանթ**—Пластинка

**Թարսոնց**—Закрытие

**Թեր ներկում**—Наклонное окрашивание

**Թուֆ-րողարկ**—Маска-куст

**Ժամապահ**—Часовой

**Ժամապահի ոգնական**—Подчасок

**Ժանգափի**—Зелено-голубой

**Լայն տրամաչափ**—Крупный калибр

**Լարան**—Шлагат

**Լարացանց**—Проволочное заграждение

**Լեզակի**—Синий

**Լորակ**—мочала

**Լուսարձակ**—Проектор

**Լուրթ**—Голубой

**Լարաֆ-րողարկ**—Маска-халат

**Խաչ-մարիո**—Макет-крест

**Խից**—Пыж

**Խծուճ**—Накля

**Խորք թիկունը**—Глубокий тыл

**Խրամատ**—Окоп

**Խրամուղի**—Ход сообщения

**Ծալվող (շրջանակ)**—Складная (рама)

**Ծալք**—Складка

- Ծածկ**—Навес  
**Ծածկագիր**—Шифр  
**Ծածկոց**—Перекрытие  
**Ծածկված զիրը**—Закрытая позиция  
**Ծարիք**—Антимоний  
**Ծիրանի**—Пурпуровый  
**Ծխազան**—Дымовая шашка  
**Ծխածածկույթ**—Дымовая завеса  
**Ծխածածկույթի ոջախներ**—очаги дымовой завесы  
**Ծխածածկույթներ առաջացներ**—Устройство дымовых завес  
**Ծխատու փառդ**—Дымный порох  
**Ծմբաթթվային նատրիոն**—Серно-кислый патрий  
**Ծոլս դնելը**—Выкуривание
- Կամոֆլաժ**—Камуфляж  
**Կամոֆլաժական ներկում**—Камуфляжная окраска  
**Կանաչպորթ**—Зелено-голубой  
**Կանոնավոր ներկում**—Правильное окрашивание  
**Կապի զիծ**—Линия связи  
**Կապույտ կորալո**—Синий кобальт  
**Կառուցվածքների բոլարկում**—Маскировка сооружений
- Կատար (սարի)**—Гребень (горы)  
**Կարդալը (ողա-լուսանկարումի)**—Дешифрование (аэро-фотосъемки)

- Կարճացնել հեռակայությունները**—Сократить дистанции  
**Կննդանի ուժերով գրին**—Живая атака  
**Կեղծ խրամատ**—Ложный окон  
**Կեռումանածեվ**—Зигзагообразный  
**Կետ**—Пункт  
**Կիսածածկ զիրը**—Полузакрытая позиция  
**Կմախը**—Остов, скелет, каркас  
**Կողուղի**—Капюшон  
**Կողմորոշ կետ**—Ориентировочный пункт  
**Կողմորոշում** ориентировка  
**Կոնդմարեն**—Макет-пень  
**Կոնը**—Бак  
**Կորզակ-բոզարկ**—Маска-шлем  
**Կորնթարդ**—Высунутый  
**Կշտամա**—Весовая часть  
**Կորատ**—Вырез  
**Կրակալ**—Мергель
- Հազուստ-բոզարկ**—Маска-костюм  
**Հակազազ**—Противогаз  
**Հաղթահարելը (արգելքների)**—Преодоление (препятствий)
- Հատակ**—Грунтовка  
**Հարմարանիր**—Приспособление  
**Հարվածելու տեխնիկա**—Техника поражения  
**Հեծանի**—Прогон

Հեծելակ—Кавалерист  
 Հենուկիտ—Опорный пункт  
 Հենարան—Покладка, стойка, подкос  
 Հենր—Стов, скелет, каркас  
 Հեռադիտակ—Подзорная труба  
 Հեռակայություն—Дистанция  
 Հեռանք—Орудие дальнего боя  
 Հեռու ընկած (գույն)—Уходящий вдаль (цвет)  
 Հետախոյզ—Разведчик  
 Հետապնդման մեջ բաշելը (հակառակորդին)—Вовлечение в преследование (противника)  
 Հետեվակ—Шехотинец  
 Հետեվազոր—Пехота  
 Հորից—Гаубица  
 Հողապատճեց—Бруствер  
 Հողապատճշի լանջ—Скат бруствера  
 Հովանոց-բողարկ—Маска-зонт  
 Հովիար-բողարկ—Маска-веер  
 Հորիզոնական ներկում—Горизонтальное опрashingивание  
 Հորիզոնական բողարկ—Горизонтальная маска  
 Հուազիծ—Линия огня  
 Հրամանգ—Инструкция, наставление  
 Հրամկազմ—Комсостав  
 Հրացանաձիզ—Стрелок  
 Հրա-բիմիական բողարկում—Пиро-химическая маскировка

Հրետակնատ—Амбразура  
 Հրետանիի—Артиллерия  
 Հրետավոր—Артиллерист  
 Հրթիո—Ракета  
 Հրծիզ ոռումը—Зажигательная бомба  
 Զիթաղեղ—Олиф  
 Զող, ծողիկ—Жердь  
 Զվածել—Овальный  
 Ճաթուուկ—Кансюль  
 Ճմածածկում—Задернование  
 Մածիկ—Замиска  
 Մակածիչ—Индуктор  
 Մարտական կատար—Боевой гребень  
 Մարտակարդ—Боевой порядок  
 Մերծանք զենիր—Орудие ближнего боя  
 Մերծափոր զեկավար (պետ)—Ближайший руководитель (начальник)  
 Մերծեցման վոլորտ (հակառակորդին)—Сфера сближения (с противником)  
 Մեռյալ տարածոթյուն—Мертвое пространство  
 Միւ—Спина  
 Մթնոլորտային աերումներ—Атмосферные осадки  
 Մորտել—Шпаклевать  
 Մումիա—Мумия

**Յետելիք լանջ**—Задний скат  
**Յետելիք կողաթումբ**—Тыльный траверс  
**Յետրնկած (գույն)**—Отступающий (цвет)  
**Յերանգ (գույնիք)**—Тон (цвета)  
**Յերկանիփ**—Двуколка  
**Յերկարացնել նեռակայությունները**—Растянуть в дистанции  
**Յերկդիսակ**—Бинокль  
**Յերկծի սալլ**—Парная повозка  
**Յերկնազույն**—Голубой  
**Յեռածծմբային ծարիք**—Трехсернистая сурьма  
**Նախամտածված նահանջ**—Преднамеренное отступление  
**Նարնջի**—Оранжевый  
**Ներկացան**—Краскомет  
**Ներկարողարկիչ**—Краскомаскировщик  
**Ներկարողարկում**—Краскомаскировка  
**Ներհակ գույն**—Контрастный цвет  
**Նորերանգ**—Оттенок  
**Շարան**—Эшелон  
**Շեղագիծ**—Диагональ  
**Շերտափակ**—Блиндаж  
**Շրջագիծ**—Контур  
**Շրջադիտակ**—Перископ  
**Շրջադիտակային կայմ**—Перископическая мачта

**Ոդա-լուսանկարում**—Аэро-фотосъемка  
**Ոդային դիտողություն**—Воздушное наблюдение  
**Ոդային հետախուզություն**—Воздушная разведка  
**Ոդային տորմիզ**—Аэрофлот  
**Ուլտրամարին**—Ультрамарин  
**Ուղղանայած ներկում**—Вертикальное окрашивание  
**Ուղղանայաց բուշարկ**—Вертикальная маска  
**Ուղղորդություն**—Крутизна  
**Ուղղորդ լանջ (նորապատճեցի)**—Крутой скат (брюстера)

**Ումբրա**—Умбра  
**Ուրվագիծ**—Контур  
**Ուրվանկար**—Силует

**Չիանգգրած կիր**—Негашеная известь

**Պահպանիչ ակնոց**—Очки-консервы  
**Պայմթյուն**—Разрыв  
**Պատկել իծաշարուկ**—Ложиться гуськом  
**Պատպարակ**—Носилка  
**Պատկերափոր-կառուցական բոզարկում**—Изобразительно-строительная маскировка

**Պատուպարան**—Убежище  
**Պատուպարան-անգար**—Ангар-убежище  
**Պարանավոր (գետնից կապած) ողապարիկ**—Привязной змейковый аэростат

- Պարաֆին—Парафин  
 Պարենի պաշար—Продовольственные припасы  
 Պարետ—Комендант  
 Պարզունակ—Перекладина  
 Պարկուն—Гильза  
 Պորտալանդյան ցեմենտ—Портландский цемент  
 Պուրակ—Роща  
 Պունկտ—Пункт
- Զույատ**—Отряд
- Բաղիո-կողմնացույց կայան—Радио-компасная станция
- Բազմական գրիմ—Военный грим  
 Բազմական կառուցվածք—Военное сооружение  
 Բազմազիտական զորաշարժ—Стратегический маневр  
 Բազմավրական զորաշարժ—Тактический маневр  
 Բազմավրական բողարկում—Тактическая маскировка  
 Բելյեֆա-պաշտպանական հատկություն—Рельефозащитное свойство  
 Բմբաձիր սավառնակ—Бомбометательный аэроплан
- Եարի բեկման կետ—Точка перегиба горы  
 Եիննա—Съена  
 Եկուպտա-մարետ—Скульпто-макет

- Եկուպտա-բողարկում—Скульпто-маскировка  
 Եռկ մարտիկ—Рядовой боец  
 Եպեկոր (գունավոր շերտ)—Спектр  
 Եվին-բողարկ-հովանոց-հեռաչափ—Штык-маска-зонтик-дальномер
- Ետիքրապատում—Затененность
- Վաճան—Щит  
 Վաճանափորել—Прикрыть щитами  
 Վառողային բռնկան պարույք—Пороховой стопни  
 Վառողի լիցք—Пороховой заряд  
 Վառություն—Яркость  
 Վարապանակ—Шинель
- Վերերկրյա հետախուզություն—Наземная разведка  
 Վերերկրյա հակոդություն—Наземное наблюдение  
 Վիրելույսան կանաչներկ—Вирилоновая зеленая краска
- Վոլորտ—Сфера  
 Վորում—Рей-грас  
 Վորոնելի արզելք—Искомое препятствие
- Տամալ**—Платформа
- Տեխնիկական ծածկարան—Техническое закрытие
- Տեղ—Пункт
- Տեղագրական կատար—Топографический гребень
- Տեղամաս—Участок
- Տեղանիք ծալք—Складка местности
- Տեղանիքի նարմարվելը—Применение к местности
- Տեղեկագիր—Ведомость

**Տեսածիր**—Обзор  
**Տեսարանա-պաշտպանական համելություն**—Видо-захищное свойство  
**Տեսողական դիտողություն**—Визуальное наблюдение  
**Տետրիլ**—Тетрил  
**Տողան**—Шеренга  
**Տպազարդված մակերեսություն**—Гофрированная поверхность  
**Տրամանցիկ ճակ**—Сквозное отверстие  
**Տրամաչափ**—Калибр  
**Տրոտիլ**—Тротил  
  
**Յանկ**—Изгородь  
**Յանկապատ**—Забор  
**Յանցածել**—Сетчатый  
**Յանց-բողարկ**—Маска-сеть  
**Յինկի սպիտակ**—Цинковое белье  
**Յից**—Ю.Л.  
  
**Փաթանը**—Пакет  
**Փոշեվառող**—Пороховая мякоть  
**Փոս**—Ров  
**Փորձարան**—Пробник  
**Փորձնական հրածգություն (լրամատի վրա)**—Пристрелка (по окопу)  
**Փորձ**—Бойлочный пыж

**Քարախոտ**—Торница  
**Քար-մարել**—Макет-камень  
**Քարտիք**—Обрыв  
**Քորաթթվային կալի**—Хлорноватокислый камень  
**Քողարկ**—Маска  
**Քողարկային ալբոմ**—Маскировочный альбом  
**Քողարկային անգար**—Маскировочный ангар  
**Քողարկիչ**—Маскировщик  
**Քողարկման ակախտություն**—Активность маскировки  
**Քողարկման անընդհատություն**—Непрерывность маскировки  
**Քողարկման բնականություն**—Естественность маскировки  
**Քողարկային խումբ**—Маскировочная команда  
**Քողարկում, քողարկություն**—Маскировка  
**Քողարկումի միջոցներ (ծեփեր)**—Приемы маскировки  
**Քողարկված դիրք**—Замаскированная позиция  
**Քրոմային կանաչ**—Хромовая зелень  
  
**Ոժանդակ**—Резерв  
**Որրա**—Охра

◆

**Յաներ**—Фанера  
**Յոն**—Фон  
**Յուֆորաթթվային կիր**—Суперфосфат  
**Յուզասային ոռումբ**—Фугасная бомба

## ՅԱՆԿ

ԵԶ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

|                                   |   |
|-----------------------------------|---|
| ԶՈՐՔԻ ԹԱՐՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱԶ-   |   |
| ՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ                  | 3 |
| ՅԵՐԹԱՇԱՐԺ                         | 4 |
| ԱՆՃԱՐԺ ԳԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ              | 5 |
| ՅԵՐԿԱՐՈՒԴԱՎ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ     | 6 |
| ՎԱՐԴՈՆՆԵՐԻ ԲԵՌՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԲԵՌՆԱ- |   |
| ԹԱՓՈԽՄՅ                           | 7 |
| ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆԳԻՄԸ              | 8 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԱՐԳԵՍՏԱԿԱՆ ՔՈՂԱՐ-  |   |
| ԿՈՒՄ                              |   |

|                    |    |
|--------------------|----|
| 1. Խալաթ-բողարկը   | 12 |
| 2. Կորդակ-բողարկը  | 14 |
| 3. Հազուստ-բողարկը | 19 |
| 4. Թուփ-բողարկը    | 21 |
| 5. Հովհար-բողարկը  | 25 |
| 6. Հովանոց-բողարկը | 26 |
| 1. Կոճղ-մարեատ     | 29 |
| 2. Քար-մարեատ      | 32 |

|                                    |    |
|------------------------------------|----|
| 3. Խաչ-մարեատ                      | 34 |
| 4. Արձեստական խոտի զեզ             | 36 |
| ԽՐԱՄԱՑՆԵՐԻ, ԽՐԱՄՈՒԵՐՆԵՐԻ ՅԵՎ, ԿԱ-  |    |
| ԱՐԻՑՎԱԾՔՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ            |    |
| 1. Խրամատների բողարկումը           | 40 |
| 2. Խրամուղիների բողարկումը         | 45 |
| 3. Կեղծ խրամատներ շինելը           | 46 |
| 4. Գնդացրային զետեղների բողարկումը | 48 |
| 5. Մարտկոցների բողարկումը          | 50 |
| ԶԱՐՔԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ԾԽԱԾԱԾ-         |    |
| ԿՈՒՅԹՈՒՆԵՐՈՎ                       | 55 |
| ԾԽԱԾԱԾԿՈՒՅԹՆԵՐ Ա.Ա.ԶԱՅԱՆԵԼՈՒ ԷՆ-   |    |
| ՀԱՆՈՒՐ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ                  | 58 |
| ԾԽԱԾԱԾԿՈՒՅԹՆԵՐ Ա.Ա.ԶԱՅԱՆԵԼՈՒ ԿԱԶ-  |    |
| ՄԱԿԵՐՊՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ                 | 65 |
| ԾԽԱԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ՈՉՈՒՏՆԵՐԸ          | 67 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԱՐԳԵՍՏԱԿԱՆ ՔՈՂԱՐ-   |    |
| ԿՈՒՄ                               |    |

III

|                                 |    |
|---------------------------------|----|
| ԱՌԱՋԱԲԱՆ                        | 69 |
| 1. ՆԵՐԿԱՅՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄ           | 70 |
| Ներկեր, նրանց գույները յեզ ներ- |    |
| կարողարկման համար գործադրելը    | 74 |
| Ամրապնդիչներ                    | 78 |

|  |     |
|--|-----|
| 11. ԵՅՈՒԹ ՆԵՐԿԵՐ ՅԵՎ ԱՄՔԱՊՆԴԻՉՆԵՐ              | 84  |
| Ներկեր   | 90  |
| Ներկեր խառնուրդներ յեվ ամքապնդիչներ պատրաստելը | 92  |
| Ներկարողարկումի աշխատանքի կարգը                | 94  |
| ԿՈՄՈՒՖԼԱԺ                                      | 98  |
| ԴԱՇԱՅՐԵՆ ԴԵԿՈՐԱՑԻՈՆ                            | 103 |
| ՀՐԱ. ՔԻՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՐԿՈՒՄ                        | 117 |
| Կեղծ նրգեններ յեվ խարսութիններ                 | 118 |
| Կեղծ բանկոմներ յեվ պայթյուններ                 | 119 |
| ԲՈՒԽԱԿԱՆ ՔԱՂԱՐԿՈՒՄ                             | 126 |
| Բուսական յեվ ներկային բողարկում                | 130 |
| ՈՒԶՄԱԿԱՆ ԳՐԵՄ                                  | 131 |
| ՆԵՐԿԱՔՈՂԱՐԿՈՒՄ ՀԱՎԵԼՎԱԾ                        | 133 |
| Լույս, նրա բեկումը յեվ վերլուծվելը             | 133 |
| ԲԱԺԱՐԿՈՒՄ                                      | 145 |

---

**ՀԱՅԿ. ԿԱՐԱԳՐ-ՀՐԱՏ. ԿՈԼԵԳԻԱՅՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ**

**ԳԵԿԱՋ**

1. ԵՆՎԱԼԴ. ՀՐԱՋԱՆՄԱ-ՀՐԱՋԱՎԱՐԻՆ ԳՈՐԾ  
ՓՈԽ. Գ. ԿՈՎՐԱՆՅԱՆ . . . . . 35 կ.
2. Լ. ՏԵՍՈՂԻ, ԿԱՐՄԻՐ ԾՈՒՉԱՄԵՄՔ  
ԹԱՐԳ. Գ. Տ.-Ա. . . . . 20 կ.
3. ԳՈՎՈՎԱԿԻ, ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿՄՐԳԻ և  
Ա. Կ. Կ. ԳՐՈՒԲ ՄԱԿ  
ԹԱՐԳ. Լ. ԴԱՆԵԼՅԱՆ . . . . . 40 կ.
4. ԿՈՎՈՎԱԿԻ, ԲՈՂԱՐԿՈՒՄ, Լ. մաս  
ԹԱՐԳ. Հ. ԱԼԵՔՅԱՆ . . . . . 20 կ.
5. ԿՈՎՈՎԱԿԻ, ԲՈՂԱՐԿՈՒՄ II և III մաս  
ԹԱՐԳ. Հ. ԱԼԵՔՅԱՆ . . . . . 50 կ.

**ՏՊԱԳՐՎՈՒՄ է**

- 1 Ա-ՁԵԽԱ, ԿԱՐՄԻՐ բանակ
  - 2 ՀԵՏԱԿԱԼԻ մարտական ծառայությունը
- 

ՀՀ Ազգային գրադարան



NL0211073

41 475

ԳԻՆՆ Ե 50 ԿՈՐԵԿ

